

(սրբագրված չէ, ուրիշին չտալ)

ՑՄԱՅ ԿԱԽԱՂԱՆ

պատմականակերգական պոեմ

*Ядовит и зол, ну словно кобра, я —
У меня больничнейший режим.
Сделай-ка такое дело доброе —
Нервы мне мои перевяжи.*

Владимир Семенович Высоцкий

Այդ պահին ամեն ինչ խավարեց, հետո ահավոր լույս թափվեց երկնքից, ինձ կուրացրեց... Ու թե ո՞նց կարողացա հիմա, հետո կամ առաջ պատմել թեզ այս ամենը՝ չգիտեմ եւ այդպես էլ չեմ իմանա... Իհարկե, ամբողջությամբ պատմել չի լինի: Կուզեի ամբողջությամբ պատմել, բայց անհնար է... Երեւի... Ես ամբողջ խառնաշփոթը լրիվ պատմելու համար... ոնց ասեմ, երեւի մարդ պիտի ավելի էական լինի, ո՞նց ասեմ՝ ավելի շոշափելի... Իսկ ես չգիտեմ, թե ուր եմ ու որտեղից է գալիս ձայնս: Բայց եթե ուզում ես մասնիկներով պատմեմ... այսնքն երեւի հենց մասնիկներով էլ պատմելու եմ, հետո, եղպես ավելի հետաքրքիր կլինի, չէ՞... Ցաքուցրիվ մտքերի շարադրանքն առավել հետաքրքիր է... հետաքրքիր ու փոքր ինչ արտառոց մարդկանց համար,

որովհետեւ սովորական, շարքային բլոճը դժվար ճիշտ հասկանա սա...
Դրա համար էլ քեզ եմ պատմում, որովհետեւ դու մի քիչ ավելի
արտասովոր ես, քան շարքայինները... Ավելին, դու առավել արտառոց
ես, քան մյուս արտառոցները...

Վերջին անգամ եմ հարցնում. ո՞նց անենք, այս ամենը սկսենք սկզբից՝
հասնենք վերջերին, բայց վերջացնենք մեջտեղներով, թե՞ սկսենք
մեջտեղից, հասնենք վերջին ու վերջացնենք սկզբներով... Որն է ճիշտ...
Ոնց անենք, որ գիր ու թղթից (թուղթ ու գրից չէ) քիչ թե շատ
հասկացողները, կարդալով սա, չգործածեն բրոնզե դարից քաղված
«պիտի»-ներ, «անհրաժեշտ»-ներ... դեի, մոտավորապես այսպիսի
խուրդանքներ՝ «գիրը պիտի լինի այնպիսին...», «պիտի լինի այսպիսն»,
«պետք է որ...», «անհրաժեշտ է...»...

Մի խոսքով՝ լավ, բեր մի ոտնահարում անենք դրանց եզան մաշկից
արարված երես անվանվող հետնմասերին ու սկսենք... Սկսենք ոնց
կուզենք, ոնց կստացվի, կամ, ինչպես ասում են՝ ոնց կգնա...

Չէ, հետո եկանք ու հասանք, երբ ժամանակավորապես հետ էի եկել
պատերազմից... Յա... Մի պատերազմից ընկնել մեկ այլ, առավել
վտանգավոր պատերազմի մեջ, դա իհարկե, անսպասելի էր...
Պատերազմ, ուր թշնամին ոչ թե դիմացդ է, այլ ամենուր, բացի
դիմացից... Էդ ավելի հետո սկսեցին գրոհել նաեւ դիմացից...
Իրավիճակ, ուր տաս հոգուց քսանը թշնամի են... Ու թշնամի են
համընդհանուր ու միասնական, նրանք թշնամի են իրար նկատմամբ,

թշամի են իրենք իրենց համար... Ու ես չէի ուզում խորանալ, թե ինչից
է եղպես... Դեհ, պարզ է: Սովից, մթից, աղքատությունից... Իսկ ինչո՞վ
կարող ես օգնել աղքատներին, նրանք ամենուր են, ամեն քայլափոխի...
Իսկ հարուստներ չկան, ավելի շուտ կան, բայց դու նրանց չես տեսնում...
Յա... եղպես էր... Էն ժամանակ, 91-ին... ու էլի մի քանի տարի...

Մուրացկանների իրար գզրտող ոհմակ... Ու սառցամառախուղապատ
քաղաքի ամեն փոսից դուրս արտաժայթքող բողոք... Ոչ մի շնչավոր
ոչինչ չի մտածում... Նրանք աղքատ են ամեն ինչով... Նրանցից ոչ մեկն
արժանի չէ կարեկցանքի, ոչ մի շնչավոր, էլ ո՞նց ու հանուն ինչի՞
մտածես նրանց մասին... Ո՞ւմ կարեկցեմ՝ սրա՞նց, որ մորթում են իրար,
թե տղեքին, որոնց հիմա երեւի թուրքն է մորթում... Նրանք չեն սիրում
քեզ ու քեզ էլ ստիպում են նույն բանն անել իրենց նկատմամբ... Չէ,
երեւի թե նրանց օգնելը միայն այն կլինի, որ դառնաս իրենց պես, որ
աչք չծակես հանկարծ... Նրանք անխիղճ են, իսկ ով ինչ որ ժամանակ
խիղճ է ունեցել, այբան է տաշել ու խառտել այն, որ հանկարծ կյանքում
ոչ մի պահի այն զգացնել չտա իրեն...

Ու ես հետ գնացի: Գնացի, գնացի ու հասա նույն տեղը... Յասա
քարափին... Սա, իհարկե ուրիշ քարափ էր, բայց ի՞նչ տարբերություն...
Ու էլի սկսվեց նույնը... Յա, նույնը: Պառկիր ու սպասիր հրամանին...
Եթե չկա՝ գործիր ոնց կուզես, պառկի, էլ, կրակի, սպանի...

Իսկ հիմա ինձ պետք չի հասկանալ քեզ: Ես հասկացել եմ արդեն: Քեզ
հետ պետք չէր միայն պառկել կամ մեկ մեկ էլ կանգնել, նստել: Ես չէի

հասկանում (ну, не понял) որ ուղեղս է մեղավոր, ուղեղս: Նա ի գորու չէր ձեռքերիս թելադրել, որ գրկեմ քեզ, գրկեմ այնքան ուժեղ, որ դու թեկուզ հառմանդամ դառնաս ու եղպիսով ընդմիջտ մնաս կողքիս: Ուրիշ ձեւ չկար քեզ պահելու: Երբ շուն ես պահում ու կորցնում՝ միշտ հույս կա, որ նա տիրոջը կգտնի ու կվերադառնա: Ու վերադառնում է... ավելի քան հաճախ... Գալիս, գտնում է իր տիրոջը: Բայց իմ մտքով էլ չի անցել լինել քո տերը: Ու իզուր, որ չի անցել... Կինը պիտի տեր ունենա, տեր, կգնա հակառակ դերում: Պիտի լինի տիրուհի, բայց իր տերն ունենա, Տերը, Պարոնը, Господин... Որ Ցավը չհայտնվի... Գոնե ժամանակից շուտ... ոնց որ հայտնի երգում...

Он настиг меня, догнал,
Обнял, на руки поднял,
Рядом с ним в седле Беда ухмылялася...
Но остаться он не мог -
Был всего один денек,
А Беда на вечный срок задержалася.

Որովհետեւ այդ Ցավը, միեւնույն է, մի օր գալու է: Հիմնականում դա հին թշնամիների ձեռքով «արարված» ցավն է, երկու թշնամի, որոնց անուններն են Անցյալ ու Ապագա: Նրանք անողոք են, մանավանդ երկրորդը: Քո անցյալը փորփրում էին ինչ որ անտեսանելի, տարօրինակ մարդիկ, որոնց դու անվանում էիր մտքեր: Դրանք քո մտքերը չէին: Ես քեզ ծաղիկներ էի նվիրում, դու ամաչում էիր դրանք տանել տուն. ի՞նչ կասեն հարազատներդ... Դու եղպես էիր մտածում... 20-րդ դարի վերջին: Շարունակե՛մ, թե անցյալդ էլ ինչով էր խանգարում քեզ... Սովոր էիր մենա՞կ քնել... Թող այդ սովորությունն, ասացի քեզ: Դու ինձ ասացիր՝ մի խմիր: Ես չխմեցի, թողեցի այդ սովորությունը, ավելի ճիշտ

հիվանդությունը: Դե ուրեմն, դու ել թող քո սովորություններն ու հիվանդությունները: Առողջ եղիր, թեթեւ, մի ծանրանա այն սրտին, որ քեզնով է տրոփում: Եթե շատ ծանրանաս՝ նա կանգ կառնի... Ու կանգ կառնի քո սրտի հետ, չէ՞ որ ասացի՝ քո սրտով, քո սրտի ռիթմով է տրոփում: Իսկ ապագա՞ն: Այդ ութ գլխանի, թունավոր ու գիշատիչ վիշապը... Նա՞ ինչ էր հորդորում քեզ ... Ինչո՞վ էր վախեցնում... Վաղվա օրով... Ու դու մտածում էիր դրա մասին, չէ՞... Որ ի՞նչ: Ինչպիսին կլինի նա հա՞... Ես կասեմ, թե ինչպիսին կլինի, աղջիկ ջան, կասեմ: Շատ վատ կլինի այն: Ահավոր: Սարսափելի, անտանելի... Եթե մտածես եղ անտեր վաղվա մասին... Եթե լսես վիշապին: Նա թթած ունի քո եւ քո, այսինքն նաեւ իմ այսօրվա օրվա վրա... Իսկ ո՞վ է մեզ մոտեցնում իրար, ո՞վ է սիրում մեզ այնքան, որը ստիպում է, որ իրար սիրենք, այնպես անում, որ "они внезапно попадают в такт, такого же неровного дыхания"...

Դրա համար ես սիրում եմ Այսօրը: Ու դու ել սիրեցիր այսօրը: Մենք երկուսով սիրեցինք մի բան, դրա համար ել սիրեցինք իրար: Հիմա ել սիրիր այսօրը, թեեւ չգիտեմ, թե ո՞րն է քո հիմնկվա Այսօրը: Միեւնույն է, սիրի ու ժպտա այսօրվա համար... Ժպտա նրա դեմքին ու նա կսիրի քեզ...

Ժպտա ինձ հիմա, լսո՞ւմ ես... Ես չգիտեմ, թե որտեղ ես, չգիտեմ... Ես պառկած եմ քարափին, ձեռքիս ավտոմատ: Ժպտա ու ես անվախորեն առաջ կնետվեմ: Ու հեռու կշարտեմ թշնամուն: Ժպտա, դու արդեն վճարել ես չժպտալու համար, դու չկաս, բայց հիմա, որտեղ ել լինես՝ ժպտա: Որովհետեւ կա մի բան... Կա մի բան, ինչ պետք է ձեռք բերել ամեն գնով, նա վաղուց իր գինն ունի: Հա, ունի՞ իր գինը: Երկուսի

համար նույն գինը: Ու բոլորն անպայման պիտի վճարեն նրա համար:
Այն կոչվում է սեր... Դրա համար էլ՝

ժպտա՛

պահանջում եմ, լսի՛ր, լսի՛ր պահանջն իմ,

Ապտա՛կ

տուր թշնամուն... թող հենց հիմա նահանջի...

Ելի՛ր

իմ դեմ, որ ես տեսնեմ, զննեմ դեմքը քո

Գերի՛ր

սիրտս... ու չեմ մեռնի քո ներքո:

Բացի՛ր

սիրտդ, հանի՛ր մեջդ բուն դրած «ես»-ին

լացի՛ր

բայց ժպտո՛ղ թող մնա քո երեսին:

Զգիտեմ, մի բան արա: Արա մի բան, որ երկուսով թշնամուն ցած
գլորենք այս քարափից... Տանջալի է այս քարափն ինձ համար, լսո՛ւմ
ես... Ես չեմ սիրում արդեն նրան... Քանի որ սկսեցին կրակել մեր
վրա... Մենք, իհարկե պատասխանեցենք, բայց նրանք հաստատ շատ
էին... Չետո, չգիտես որտեղից՝ ուղղաթիռ ձայն լսվեց... Ու դա մեր
ուղղաթիռը չէր նա մեր վրա էր գաիս ու նա... նա մեզ տեսնում ես... Ո՞վ

գիտի, թե ինչ ապավոր բան է, երբ քեզ տեսնում են, իսկ դու նրանց ոչ...
Ու դա կատարվում է հիմա, հենց հիմա... այսօր, այս ժամին... Գուցե դու
ճիշտ էիր անում, որ չէիր սիրում այսօրը... Ես տեսա վախեցա ու
հանկարծ տեսա ընկերներիս... ավելի շուտ՝ նրանց դեմքերը... Ու այդ
դեմքերը ոչ վախեցած էին, ոչ սարսափած... Ես ամաչեցի, որ վախեցել
եմ... այն էլ ինչի՞ց՝ ինչ որ մի մահից... ինչ որ մի գոյատևման
ժամանակաշրջանից... այսուհետ ապրելու բացակայունից... Ես
վախեցել էի, որ վերջ, էլ ոչ մի բան չի լինելու... Ոչ մի սպիտակուցային
մակրոմեխանիկա... բայց ես կսփոփվեմ, որ մահից բացի գոյություն ունեք
դուք, անուններ, որոնցով շնչել եմ ես ծնունդից ցայսօր ու հիմա էլ դուք,
իմ սիրելին, գոյություն ունի այն հողը, որի վրա քայլել եք դուք... ու
կքայլե՞մ ես հիմա այն հողի վրայով, թե ոչ՝ դա աննշան մի հյուլ է, որ
կարելի է միմայն քմծիծաղ տալով մտածել դրա մասին...

Ես պառկեցի մեջ վրա ու սկսեցի կրակել օդ:

... թող ինձ ներվի, բայց ես մի տեսակ չեմ սիրում հետմահու
հերոսացածներին, թեեւ շատ կան այդպիսիները... Որովհետեւ դարեր ի
վեր, մարդ արարարծն ընդունել ու իր դառնածին հոգում կնքել է, որ ում
սպանեն՝ տեղում պիտի հերոս դառնա... Բա ի՞նչ... Բանդիտ Կամոն էլ
եր հերոս... որ Թիֆլիսի Էրիվանյան հրապարակում ռումբերով ու
գնդակահարություններով մի հարյուր լրիվ անկապ անցորդի սպանեց...
փողի համար... իհարկե, հեղափոխական էքսպրոպրիացիա...

Էքսպրո... Էքսպրոմտ, ես կասեի... Էդ հերոսների համար մարդ սպանելն՝ ինքնին էքսպրոմտ է... Տիված հավ Շահումյանն էլ մեծ հերոս դառավ, երբ որ ճակատին մի քանի հատ անգլիական գյուլլա հագցրին... Տրոցկին էլ էր հերոս... Պատանիներին ու կանանց զազանաբարո եղանակով տանջահարող ու գնդակահարող Չեզեվարան էլ հերոս դառավ, երբ վերջապես Բոլիվիայում գյուլլախորով արին, ձեռներն էլ կտրեցին, տարան որ դնեն Ֆիդելի դեմը, հարցնելով՝ թե սրանք ե՞ն ազիզ ախպորդ թաթերը... Յա... շատ հերոսներ եղան, մանավանդ քսաներորդ դարում... մեզ մոտ էլ... դարավերջին... Դըխկոըխկացված... Նույն վայրյանին հերոսացած ու «ընկերովի մահը հարսանիք է» ասացվածի ճշմարտացիությունն արդարացնող... այրեր... Բա էլ ո՞նց կլինե՞ր՝ սպանել են: Ու շատ վատ են արել, որ սպանել են... Կարելի էր տանել ու ցմահ բնակեցնել Երեւանյան անուշահամ կոյուղում... Յա, բա ի՞նչ... Ինչի՞, օրինակ Տրոցկուն խփեցին, ո՞նց կարելի էր նման սխալ թույլ տալ... Դրան պիտի անպատճառ բերման ենթարկեին Բերիայի մոտ... Էդպիսի Տրոցկիներ ե՞ն բերման ենթարկվել... Կենթարկեին ու... Մի խոսքով՝ Լավրենտի Պավլովիչը լավ գիտեր, թե ինչ կաներ: Ընդհանրապես, ես աշխարհում երկու կոմունիստ կան, որ քիչ թե շատ խելոք են եղել՝ Իոսիֆ Վիսարիոնչն ու Լավրենտի Պավլովիչը... Մնացած բոլորին, բոլորին անխտիր, իհարկե, դրանց անմիջական սերունդ հանդիսացող, էսօր մեզ մոտ ու այլուր բուն դրած բոլոր միջազգային կազմակերպությունների ու «մարդու իրավունքների» գրասենյակների ողջ անդամակազմին, կոլեկտիվ հայտերով պետք է տանել Յավայան կղզիներ, Մաունա Քեա լեռան տասնհազարերկուհարյուր մետր բարձրությունց թափել Կոլումբիայի Քանինոն Քուլբա ձորաճեղքը, վրայից վրայից էլ թափել մի հինգ,

վեցհարյուր տոննա ծծմբական թթու (Դե՝ H₂SO₄, էլի... ու ստեղ կարելորն էնքան թթուն չի, որքան «ծծմբական»-ի սկզբի ծծ-ն), այնուհետ բաց թողնել 14 տոննա ֆոսֆորաջրածին, 35 միլիոն պասկալ ջրմուղները մաքրագերծող կաուստիկ սոդա, (NaOH), ցարական օղի, ազոտական թթու ու լիքը բետոն... հետո ոստիկաններ կանգնացնել, որ հանկարծ բետերը դուրս չգան...

Չա... Չենց դա է եղ բոլոր քաջագործ-լեգենդար հերոսների, մարդասերների-խաղաղասերների միակ հանգրվանը... Ու ասեմ. շատ քիչ է պատահում, որ նաև քաջագործներից որեւէ մեկը հենց էնպես, իզուր տեղը սպանված լինի, շատ քիչ... Բայց նաեւ զարմանալի չի, որ իր կյանքի փսլթօծված քառուղիներին նման արարք կատարող անձնավորությանը արձան կանգնեցնեն... Անգամ իր կենդանության օրոք... Իբր դրա միզախառն թրիքի մեջ լող տալով ապրելը քիչ էր, հիմա էլ պիտի անընդհատ, ավելի պինդ կղկղանքից «արարված» արձանը տեսնես, դրա անունով կնքված փողոցով անցնես կամ զգվանունը կրող հաստատությունը մտնես... Որովհետեւ ճիշտ է ապրել եղ մարդը ու հերոսավարի է սատկել... Ինչի հիման վրա է ապրել՝ անհասկանալի է... Ցանկացել է, երեւի... Իհարկե... Չաա... Ինչ զգվելի ցանկություններ ասես, որ չի ունենում մարդ արարածը... ու դրանցից ամենալիկտի ցանկությունն, իհարկե, ապրելու ցանկությունն է: Ես վախենում եմ, երբ տեսնում ոմանց ապրելու պահին:

Դրանց կյանքն, ինքնին, մարդակերության դրսեւորումներից ամենածպտյալն է ու քողակվածը: Ամենածայրահեղ կրետինիզմը... Չա, ու նաեւ մեկ-մեկ ոնց որ գլուխ գովեն՝ «Մենք ծայրահեղությունների ազգ ենք»... Ախր ձեզնից ի՞նչ ծայրահեղական... Ծայրահեղականությունն այնքանով է նման ձեր բնույթին, որ ուղղակի «ծայր» բառի հետ

ամնչվող հսկայական համադրություն կա մեջները... Դե գ...

հոմոսեքսուալիստ են, էլի, ուղղակի էլի գնահատող չկա:

Չէ, ծանր է դիմանալ ե՛լ դրանց գոյությանը եւ անգոյությանը, երբ էլ ուզում է մեռնի, իր համար նախատեսված ժամանակից շուտ կամ ուշ...

Վա՛յ... Ժամանակից շուտ: Էդ է՛լ է հիմա մոդա դարձել... Եսիմով՝ ջահել-ջահել մեռավ: Բայց ո՞վ... Պողոս Պողոսյանը... Ու ի՞նչ... Մեռավ:

Քառասունչորսում... Երուսուկում... Մի հարցնող լինի՝ ինչի՞ մեռավ:

Ի՞նչ իրավունքով: Ախր, մարդ՝ մեռնելուց առաջ պետք է (անգամ

պարտավոր է) մտածել. այդ պահին իրեն մեռնելու իրավունք

վերապահվա՞ծ է, թե՞ ոչ: Հա, ի՞նչ... Դու ո՞վ ես, որ մեռնում ես...

Երիտասարդ, ուժերի ծաղկման հասակում... (Չես հասկանում, թե

ուժերն ընդհանրապես ո՞նց կարող են ծաղկել)... Ո՞վ ես, որ մեռնում ես

Էդ հասակում, ինչո՞վ ես աչքի ընկել, որ հիմա էլ մեռել ես... Մոցա՞րտն

ես, Պո՛ւլչկինն ես, Եսե՛նինն ես, Մեծարե՛նցն ես, թե՞ Վիսոցկին... Անգամ

Վարդան Պետրոսյանն իրեն թույլ չի տալիս մեռնել, թեեւ իրավունք

ունի... Իսկ սրա՞նք... Չէ, իրավունք գնահատող չի մնացել

ընդհանրապես:

Բա դրա հակառակը... Էն, որ երկար են ապրում... Ու, հիմնականում

Էնպիսի ռախիդոիդներ, որ ընդհանրապես ծնվելու ոչ մի

ֆիզիկաբարոյական իրավասություն չունեին: Բայց ավելի վատ կլինի,

որ դրանք, Էդ ցռան ջորիները՝ հանկարծ շուտ մեռնեն, ասենք 36

տարեկանում... Մոցարտի մահվան տարիքում... Պատկերացնում ե՞ք

Նման բան... Ասենք, ազգային ժողովի պատգամավոր դառնալ

ցանկացող (դեհ, իհարկե, խոսքը վատ պատգամավոր դարձնալ

ցանկացողների մեջ, այլ ոչ լավ... Ես ինչ գրեցի, արա՛)... հա, ու նա, Էդ

....ային երիզորդը մեռնում է Մոցարտի տարիքում... Դրանից հետո՝ էլ

ո՞նց Մոցարտ լսես ընդհանրապես... Ու էն էլ մեռնի հերոսավարի, ասենք 250-ը բացած, տրասի վրա, իր անթրաշ, ու բնական է՝ հիդրոցեֆալիայով տառապող նանարի հետ... Ու մեռնում է ինքը... Ինչպես ասում են՝ թռիչքի պահին... Կամ՝ ընդհատված թռիչք... Դու ով ես, ախր, է՞... Բայց հիմա մտածենք. ո՞րն է ճիշտը ես վերջինների համար՝ շուտը, թե՞ ուշը... Վատ չէր լինի, որ ամեն մի խավ իր մեռնելու ժամկետն ունենար... Ասենք չինովնիկները, պատգամավորները, գործարարները՝ իրենց ժամկետն ունենային, մյուսները... Չէ, չէ, չէ... Էդ ասածներս խավ չեն, Դրանք դրանք տեսակ են... Նրանց վրա, օրինակ, իմաստ չունի բժշկական փորձարկումներ կատարել, որովհետեւ նույն արդյունքը կստանան, ինչ ամենասովորական, ամենատարրական տարականի վրա փորձելուց... Նկատի ունեմ ֆիզիոլոգիկ վիճակը՝ ինչը որ չի վերաբերում պահվածքին ու ապրելակերպին: Ինքն ու տարականը շատ տարբեր երեւույթներ են: Տարականը իր համար, խելոք, գլուխը կախ մի տեղ վեր է ընկնում, մութն ընկնում է, դուրս է գալիս ու իր համար ֆռֆռում, «բալթիմ» մի կտոր հաց տանեմ՝ Երեխեքն ուտեն.... Զետո՞ գնում-մտնում է պլենդուզի տակ ու Էլի քնում.... Իսկ սրա՞նք... Ի՞նչ են անում... Զը՞... Վերցնենք, ասենք սրանցից մեկի օրը ու, ինչ ասեմ՝ վերձանենք հերթականությամբ:

Ուրեմն:

Եթե նա արթնանում է ու մտնում է զուգարան, որ գիշերվա լափածի մի մասը գոնե երեսուն տոկոսը դուրս արտամղի, կնշանակի զուգարանում մտնում է ամենաթիչը երկու ժամ.... Մի ժամվա չափով էլ օրվա ընթացքում մտնում է տարբեր զուգարաններ. աշխատավայրում, «օբյեկտներում» ու քաղաքի տարբեր վայրերում... (բայց ես քչացնում եմ, տեսեք).... հաշվենք՝ օրեկան երեք ժամ, այսինք հարյուրութսուն

րոպէ նա այդ գործով է զբաղվում... Օրվա ընթացքում, տարբեր «օբյեկտներում» լափում է մոտավորապես երկու ժամ.... Գործի տեղը էշ-էշ խոսում է նվազագույնը երկու ժամ, կամ փոխարենը Ազգային ժողովում է անասուն-անասուն խոսում կամ քնում է երկու ժամ... այս «երկու ժամին» անվանում ենք «Անապահովիչ խեժապահպանակություն»... Հա... Հիշյալից հետո, նա «տղեքով ու ընԳերուհիներմվ» գնում է «մի տեղ նստելու»... լափելու, լակելու ու անասուն կենացներ ասելու նպատակով.... ընդ որում, այժմյան կենացների հիմնական մասը Աստծուն է նվիրված, «Մեր լավ, ազիզ Աստծո կենացը, ցանկանանք նրան քաջառողջություն, թող իրա գործերը միշտ լավ էթան, որ մեր գործերն էլ լավ էթան... Մեկն ասի՝ ախր դուք էշի բալեք «Աստված տա...» էլ ասելու իրավունք չունեք, Ասված որ չտա էլ՝ դուք կխլեք... Հա ... նստում է մոտավորապես յոթ ժամ... յոթ ժամ, ... 420 րոպե.... ընթացքում լափում է երեք ժամ, լակում է մեկ ժամ, էշ կենացներ է ասում երկու ժամ, էշ կենացներ է լսում մեկ ժամ... հետո գնում, վեր է ընկնում և կ մռփում է յոթ ժամ.... Ամբողջ օրվա ընթացքում բջջային հեռախոսով խոսում է նվազագույնը չորս ժամ.... Ընդ որում՝ խոսում է **ոչ մի բանի մասին....** Ես էլ ձեզ սրա քսանչորս ժամը... Մի խոսքով.... Մռփելուց հետո էլի արթնանում է (ցավոք) ու նորից զուգարան, նորից՝ էլի զուգարան... ու դա անընդհատ կրկնվում է... **день сурька...** Ուրեմն, ինչպես է անցնում նրա կյանք անվանվող օրը... Վերցնենք, որ միջինը, նա կարող է ապրել, ասենք վաթսուևութ տարի... եթե, բախտը բերի ու չսատկացնեն ավելի շուտ... մի բան, որ պատահում է, ցավոք՝ ոչ այնքան հաճախ... Իր անտեղի ծննդից մինչեւ վնասակար երեսուն տարեկանը նույնպես գումարում ենք Ես հաշվին, որովհետեւ, Էն ինչ ասացինք՝ հաստատ քիչ ենք ասել, մեղմացրել ենք...

Ուրեմն, որոշեցինք, որ նա, իր տգրուկային ու կղկղառատ կյանքում ապրում է վաթսուևութ տարի, կլորացնենք՝ յոթանասուն: Այս ամենն ի մի բերելով, գումարելով, բազմապատկելով, հանելով եւ բաժանելով ստացվում, որ նրա յոթանասունամյա «կյանք» անվանվող տխուր միջադեպը ձգվում է հետեւյալ մաթեմատիկական հաշվեկշռով: 70 տարի, այսինքն 611520 ժամ:

Չուզարանում անցկացնում է 76440 ժամ, այսինքն 8 տարի 45 օր
Ընդհանուր լափում է 127400 ժամ (14 տարի, 6 ամիս)

«Անապահովիչ խեժապահպանակութեամբ» է զբաղվում 50960 (5 տարի, 9 ամիս)

Էշ կենացներ է ասում 50960 ժամ, (5 տարի, 9 ամիս)

Էշ կենացներ է լսում 25480 ժամ, (2 տարի 10 ամիս, 15 օր)

Լակում է 25480 ժամ, (2 տարի 10 ամիս, 15 օր)

Մռփում է 178360 ժամ (20 տարի, երեք ամիս)

Յեռախոսով ոչ մի բան մասին չի խոսում 76440 ժամ, (8 տարի 8 ամիս)

Սրան էլ, չգիտեմ գումարե՞նք, որ նման ճիճուները սեքսի համար միայնգամայն անպիտան են, իրանց նման լիճած բլոճ ունենալու հանցավոր նպատակի համար սեքս են անում քառասուն րոպե (այսինքն, որ իրենց արյունի փոխարեն քրտինքով լցված կանայք չորս լիճած փայտոջիլ ցկնեն՝ ամեն փայտոջիլի վրա ծախսվում է ամեաշատը տաս րոպե), դրան կարող են գումարվել մի դյուլժին էլ ուրիշ քաթոտ կանայք, որոնց հետ, էսպես թե էնպես իրենք շատ քիչ ու ահավոր ընկճված են կենակցում, քանզի տանում են մի տեղ, կենացներ են աում, խոսում են, ու մի կերպ գզմռռտվում ու անհասկանալի է դառնում եղավ,

թե չեղավ կենակցման փաստը... Եթե նա մեկին բռնաբարի անգամ՝
ոստիկանները չեն կարողանա արձանագրություն կազմեզ...
Էքսպերտները ոչ մի տեսակի սարքավորումով չեն կարողանա որոշել՝
կատարվե՞լ է միջադեպը, թե ոչ... Ո՞նց որոշես, երբ արդեն
երեսունհինգ տարեկանում, Էստեղից մինչեւ Տիսիմվալի հասնող փորի
պատճառով հենց իրենք չեն էլ կարողանում նկատել *нипетка*-ից ոինչով
չտարրբեվող իրենց «անդամները»... Այնպիսի անդամներն, ինչպիսի,
ոնց որ իրենց կուսակցությունների անդամներն են... Կամ
ընԳերությանն ու ախպերությանը... Էն ախպերությանը, ուր ոչ թե Աբելն
է սպանում Կայենին, այլ Կայենն է անընդհատ մահվան դուռը
հասցնում Կայենին.... Աբել չկա՝ վերջ, կտրվել են Աբելները...

Մի խոսքով: Ահա... Եւ իսկապես գեղեցիկ, ես կասեի՝ սքանչելի մի օր՝
նա սատկում է եւ համբարձվում երկինք: Էնտեղ էլ, գիտեք, երեք հարկ
կա, ամեն հարկում էլ մի-մի դուռ: Առաջին հարկում դրախտ մտնող
պոպատից դուռն է՝ իր 7 կողպեքներով ու *глазок*-ով.... ասում են հիմա
7 հատ էլ *камера наблюдения* են ավելացրել: Ներքեւի,
կիսանկուղային հարկում քավարանն է, (հա, քավարանի դուռը շատ
հետաքրքիր է՝ ինքը մի դուռ է՝ համ *глазок*-ով համ էլ առանց *глазок*-
ի), իսկ նկուղային հարկը, բնական է, որ դժոխքն է, իր մշտապես բաց
դռներով: Նկուղը բոլոր հակերից ամենամեծն է, համարյա
մարգադաշտի չափ, որովհետեւ մեծ կուտակումներ են լինում... գոռում
են, գոչում, բրթբրթում իրար... այլանդակ ձայներ են լսվում...
հիմնականում հայերենով... դեհ... հիմնական հյուրերն են,
պատվավոր... ընդ որում, դա միակ վայրն է, որտեղ մենք քիչ չենք բայց
մեզ հայ են ասում.... ավելին, միակ տեղն է, ուր Ծովից Ծով Հայաստան
հասկացությունը իրապես կա, գոյություն ունի... Դա նաեւ միակ տեղն է,

ուր հայերի կապը կտրվում է իսկական հայերից... նրանք մոռանում են, թե Նարեկացին ով է, որ եղեռն է եղել... Մի խոսքով, հերթը հասնում էս մեր վերջապես սատկած անասունին: Նա, բնականաբար, արդեն տեղյակ է, թե ուր պիտի մտնի, բայց քանի որ ինքը լուրջ տղա ա, ծանր քայլվածքով մոտենում է դռանը ու ընդունողին ասում,-

- Յը, ասա, բան ունե՞ս ասելու՝ ասա, ես էն տղեն չեմ, որ ինձ դժոխքով վախցնեք... Ու վաբշե, չեմ ջոգում, թե խի եք մեզ ստե կանչե, կարող ա ինչ որ սխալ բաներ ենք արե մենք...

Էդ մի հոգու մասին խոսվող «մենք»-ից էնտեղ էլ չեն զարմանում, որովհետեւ վաղուց սովորել են, բացում են սրա կյանքի մատյանը, նայում են... հետո մի հատ էլ են նայում... ու զարմանում... չնայած շատ են տեսել նման բան... Չարմանում են ու տալիս են մի եսպիսի զարմանահարց....

- Արա՞.... այ... չգիտեմ ինչ... մենք քեզ 70 տարվա կյանք ենք տվել, որ դու 8 տարի քաթես, 14 տարի, 6 ամիս լափես, 5 տարի, 9 ամիս «Անապահովիչ խեժապահպանակությամբ» զբաղվես, նույն չափի էլ էշ կենցներ ասես, 2 տարի էշ կենացներ լսես՝ 2 տարի լակես, 20 տարի մռփես ու 8 տարի, 8 ամիս հեռախոսով խոսա՞ս... Յը՞, արա... Բա.... Բա մենք ի՞նչ անենք քո հետ....

Ու սարքում են... իրենց համար քաղաք են սարքում... Քանդում են ու սարքում... Ստեղծագործ ձեռքեր ունեք... դրա համար եք մի քանի հատ ծուռ շենք սարքելու համար մի ամբողջ սերնդի խեղդում փոշու եւ կեղտի մեջ... Մենք փոշի ենք շնչում, մենք ո՞նց լավ կողմից դրսեւորվենք, եթե արդեն տաս տարի է՝ փոշի ենք շնչում: Մեր համար փոշի ենք շնչում՝ մյուսների վրա ցավ ու մահ արտաշնչում: Երբ հարեւանների դառնում են շձոնջենական, երվյալ թռնամիներդ... Որովհետեւ վերանորոգում են... են անում իրենց բնակարանները... Հարուստ-աղքատ կապ չունի... Փող ունի, չունի՝ կապ չունի... հա, մի բանը, որ իրոք նա չունի, դա էն է, որ իր համար ոչ մի բան կապ չունի: Ու ինքն իր տունն էնպես պիտի սարքի, ինչպես ունեցողը... Ու դա, եղ ռեմոնտը՝ շարունակվի նվազագույնը չորս տարի... Ու դու պիտի լռես, որովհետեւ մարդու իրավունքներ ունենալով՝ իրավունք չունես մարդու իրավունք ունեցողին ասել՝ «Ցավների տանեմ, մի յուր-ուր բանվոր կանչեք, մի ամսում պրծնեն ձեր ռեմոնտը»... «Մենք հնարավորություն չունենք» կասի, «մեր ձեռներով անում ենք»... Ու վերջ, պրծավ քո կյանքը... Դըխկ, շըխկ, դռռռռ... Տևից փախչում ես՝ ընկնում ես դրանց թափած ավազի մեջ... Ամբողջ բակն ավազ է... Շոգ է, փոշի, ավազ ու դիսկոց, առավոտից մինչեւ ուշ գիշեր... Ի՞նչ անի մարդը... Բա ո՞րն են իմ իրավունքները, այ քաղաքա-թաղատեր խրտվիլակներ ու մարդու իրավունքների պաշտպան բոզեր... Ո՞րն են, ձեզ եմ հարցնում, զուգարանի պատին ճացված սերմնահեղուկներ... Քանի՞ կյանք է պետք, որ գոնե տաս տարի առանց դիսկոցի ու դռռոցի ապրես: Դա անվերջ է, որովհետեւ երբ վերելինը պրծնում է՝ կողքինն է սկսում, հետո մյուս կողքինը... Իմ տունը պիտի ամենալավը լինի... Դրա համար պիտի քանդեմ պատերը, նորը շարեմ, երկու դուռ դնեմ, ունիտազը տանեմ

խոհանոց, լվացարանները սարքեմ ութ հատ, գիպս կայցնեմ, միջանցքը լեռացնեմ հետո մտնեմ մեջն ու ընտանյոք հանդերձ սատկեմ... Ինչի զարմացաք... Չգիտեի՞ք, որ սատկում եմ դրանք: Կամ անմիջապես ռեմոնտից հետո՝ ամբողջ ընտանիքով կամ ընթացքում՝ կամաց-կամաց: Տերյանի վրա մեկն եղպես ռեմոնտ էր անում... Առաջին հերթին պատշգամբն էր բակի կողմից մեծացնում, առաջ տանում էր... վատ մարդը... Չորրորդ հարկի պատշգամբը... Ու սկսվեց... «Ընթացքում»-ը... Ուզում եք հավատացեք, ուզում չե՞ք... Երբ բակում պատշգամբի համար հատուկ երկաթե ձողեր դրեցին, որ զողեն իրար, ընտանիքի չորս տարեկան լակոտը, որն ուշադիր հետեւում էր երկաթ զողող գործիքով (сварочный аппарат) աշխատող բանվորներին, մի քիչ շատ էր մոտեցել նրանց, զողիչի (сварочный аппарат) կրակը թռել էր աչքերին ու անդարձ կուրացրել նրան... Թվում էր թե գոնե մի ամիս գործ չեն անի, երեխա է կուրացել, ի վերջո... Բայց չէ, ո՞նց կլնի, հո կիսատ չէ՞ն թողելու... Մի քանի օր չանցած՝ երկաթներն արդեն ամրացնում էին նախկին, այժմ արդեն քանդած պատշգամբին...

Բայց զողող մեքենան (сварочный аппарат) չորրորդ հարկից իջեցնելուց՝ ընտանիքի մայրը, մաման, այս ամբողջ ռեմոնտի ու պատշգամբա-մեծացման հիմնական մտահղացողը, հեղինակն ու հրահրողը, փոխանակ սպասի, որ այն (сварочный аппарат) իջեցնեն ներքե՝ նոր բարձրանա աստիճաններով, փորձել էր տա՛կից սողոսկել ու բարձրանալ... զողող մեքենան (сварочный аппарат) բանվորների ձեռքից ընկել էր մամայի վրա ու մամայախառն գլորվել էր երրորդ հարկից մինչեւ երկրորդի կեսի պտտվելու մասը ու ծեփվել էր պատին... Էնպես էր լիճվել, որ ոչ ոք չէր կարողացել նրան ճանաչել... Չողող մեքենայի հետ (сварочный аппарат) գրկախառն հավերժացել էր

մաման... Ու սիրունացել էր, ասում են... այսինքն... կենդանի
ժամանկվա մարմնի այլանդակ ու ցցուն մասերը հավասարվել էին
իրար ու ասում են, որ հեչ վատ չէր նայվում նա այդ կարգավիճակում...
Ու ի՞նչ... Կանգնացրի՞ն գործը: Դեհ, իհարկե՝ կանգնացրին... մի քանի
օրով... այլանդակ արագությամբ, մտքրին դագաղը, փակեցին, տարան
զցին փոսը... Ընտանիքում մնացին չորս հոգի. հայրը (պաբան, որ
բանվորներին օգնելուց՝ գրիժա էր ձեռք բերել), մեծ աղջիկն, կույր տղան
ու պաբայի զոբանչը, ընտանիքի տատին... Բայց վերջինս
ամենազգայունն ու խոցելին դուրս եկավ, չհիմացավ աղջկա (մամայի)
վաղահաս մահին՝ մի ամիս հետո ինֆարկտ ստացավ ու մեռավ:
Պաբան մեռավ ավելի ուշ, Յանրապետական հիվանդանոցում,
գրիժայից, իհարկե՝ մեն-մենակ, որովհետեւ աղջիկը ռեմոնտ արած տան
«պոլերն էր սրբում» էդ պահին: Մի ամիս անց տան լույսերը գնացին ու
աղջիկը կույր եղբորն ասեց,- «Գնա տես ինչ ա էղե»... Երեխան գնաց,
շոշափելով գտավ Էլեկտրական հաշվիչը, մի կերպ հետ գնաց, աթոռ
բերեց, կանգնեց վրան, բայց ոչ թե «տեսավ, թե ինչ ա էղե», այլ քիչ անց
հարեւանները «տեսան, թե ինչ ա էղե նրա հետ».... հաշվիչի տակ ընկած
կապտամոխրագույն մարմին.... Աղջիկը մնաց կենդանի, բայց փոքր ինչ
դեֆորմացված, մեջքը ութ սանտիմետր առաջ էր եկել հետույքից,
ոտքերն ու ձեռքերը ծոմովել ու ոչ մի բանով չէին տարբերվում հին,
սովետական սեւ ու սպիտակ հեռուստացույցների բարակ ու անճոռնի
հենարաններից... Պատկերացրի՞ք, ինչ որ ճոռթած մարմին՝ չորս բարակ
հենարանների վրա... Դեմքը հիշեցնում էր Windows 95-ի ինտերֆեյսը...
Ո՞վ կուզի շփվել հետը, դեհ, ձեզ տեսնեմ, տղամարդիկ... Ու աղջիկն էդ
վիճակում մնաց լավ վերանորոգված ու որ ամենակարեւորն է երկու
մետր առաջ տված պատշգամբով տան մեջ...

Բա, եղպես է լինում... Դիսկացնո՞ւմ էիք, դռնացնո՞ւմ էիք, բոլորի կյա՞նքն էիք պղտորում... տեսա՞ք ինչպիսի վերջաբան ունեցավ այ ամենը: Մի՞թե դժվար է ըմբռնել, որ մյուս մարդկանց ցավ պատճառելով սեփական բարեկեցություն անվանվող կանխալիզմը՝ երբեք, ոչ մի պարագայում հենց-էնպես չի անցնում... Ու թող չփորձի որեւէ մեկը կարեկցել դրանց... Թող բոլոր հարեւաններին հազար ներողություն խնդրելով նախազգուշացնեն, որ երեք շաբաթ մի քիչ աղմուկ են հանելու (մի քիչ), ու եթե դրանից հետո կամ ընթացքում հետները հատ բան պատահեց, ինչպես ասում են՝ ես նաղդ կարեկցող եմ: Բայց եթե երկու ամիսն անցավ ու բանի տեղ չդրեցին հարեւանների բողոքներին, այսինքն վատ բան արեցին՝ եղ վատ բանն էլ մշտապես բուն կղնի իրենց ռեմոնտ արած տներում, եսքան բան: Ավելի ճիշտ՝ եղքան վատ բան: Ու թե դրանցից մեկի դագաղը (կապ չունի, թե երբ) հայտնվի շենքի շքամուտքին, դա լոկ ցնծության պահեր կպարգեւի մյուսներին... Ընդհանրապես, մաթեմատիկան մատերի վրա խաղացնում է մարդ արարած անվանվող հիմար ու վնասակար առարկային: «Ըհը»՝ մտածում է նա. «Չորս սենյականոցս ութսունհազարով ծախեմ, հիսունհազարով առնեմ այ ես քանդ ու քարափ երեք սենյականոցը, զիլ ռեմոնտ անեմ, հարյուր հազարով ծախեմ, երկու հատ երկու սենյականոց կառնեմ 30-ով՝ երեսունհազար մաքուր կմնա ինձ... Ու անում է նա եղ բանը... Գնում է հիսունհազարանոց գոմը ու սկսում ռեմոնտը: Մենակ: Նվազագույնը դա տելում է վեց տարի, ընթացքում նա տանջահար է լինում, խեղդվում է փոշու, ավազի ու ցեմենտի մեջ... երեսուն հազարը ծախսվում է առաջին տարվա ընթացքում: Վեց տարի անց, մեր ռեմոնտ անողը հյուժված, ծռված մեջքով... մի խոսքով սատկած պրծնում է ռեմոնտը... Բայց վեց տարում գները բարձրացել են

ումի երկուսենյականոցն արդեն ութսուն հազար է... Նա կորցնում է իր կյանքից մի ամբողջ վեց տարի, երեսուն հազար, ընկնում է նվազագույնը եւս երեսուն հացար պարտքերի մեջ, ու իր նորմա չորսսենյականոցի տեղը ձեռք է բերում թթով կայցրած երեքսենյականոց, գրիժա, երիկամների բորբոքում, տրոմբ ու թոքախտ... Էդպես է, մաթեմատիկան միշտ խաղ է անում հիմարների հետ... Ամենուր, լինի Էստոն, լինի ԱՄՆ-ում... Մարդը չի ուզում ապրել իր այսօրվա օրով, այսօրվա օրից փախչում է... «Աշխատեմ-փակվեմ՝ տունը մաա մեզ»... Ու աշխատում է... տաս տարի... հետո Էլի տաս տարի... Չրկում է իրեն ամեն ինչից: Տան փողը փակվեմ, հեսա, հեսա փակվեմ ու վերջ, մաա ինձ՝ հանգիստ ապրեմ... Ու նա հասնում է իր գերնպատակին: Տունը մտում է իրեն... Յոթանասունվեց տարեկանում... Նա չի Էլ հասկանում, որ Էդ քոսոտ տան պատճառով չի հասցրել երեխաներ Էլ ունենալ, որ Էդ անտեր տունն ինչ որ պահի տեր ունենա... Ու պառավ կնոջ հետ միասին մեռնում է՝ արդեն իրեն մնացած տան մեջ...

Ու ամենաահավորն էն է, որ դրանք սերունդներ են թողնում... Այսինքն արդեն թողել են... Անհասկանալի իշուկների կոլեկցիա... Ո՞վ կփորձի խորանալ աճող սերընդի ապրելակերպ անվանվող ճիճվակռվի մեջ... Ի՞նչ են անում, ո՞նց անում՝ չես կարող հասկանալ: Ո՞նց է անցնում դրանց կյանքի գարշաճանապահը... Դեհ, ասենք՝ Մր3 են լսում ու նկարվում են... հեռախոսով... Էդ ոչինչ... Հա, Մր3 լսելը դեռ ոչինչ, բայց որ իրենք Մր3 են **մտածո՛ւմ**՝ Էդ հարյուր տոկոս... 100 մեգաբայթի

տեղը՝ սիմաժ 3 մեգաբայթ... Բայց մեկ է, ոչինչ չի ընկալվում,
որովհետեւ ուղեղների տարողությունը չի գերազանցում 2 կիլոբայթը...
Թե ոնց են **խոսում**՝ դա գիտես, լսվում է... «Վաղը չեմ կարա գամ, վաղը
«փարթի»-ի եմ... Ասա, այ... (ձեռք էլի գնաց Բ-ին, հա)... ...կներե՞ք՝
մայրակենսակցող, պապերդ էի՞ն ձեր չիմաժ գեղում տատերիդ հետ
«փարթի» անում... Ստեղ են ասել՝ **«Գնացի փարթի, ունեցա որդի,
գլխարկը փոփոլ, անունը նիկոլ»** 1... Պատասխանի, «փարթի»-ին ո՞րն
է, пидор! Ամերիկանացման փորի ճիճուն՝ երիզորդը, վաղուց արդեն
ստամոքսներում էլ չի, չեղած ուղեղներն լափել-պրծել է, հիմա ուզում է
հետանցքներից դուրս գալ, բայց դժվարանում է, որովհետեւ, երեւի՝
էնտեղ անընդհատ ուրիշ բաներ են մտնում-դուրս գալիս... Ու
ամերիկյան **made in china** երիզորդը չգիտի ի՞նչ անի... Առանց էն էլ էշ
երիզորդ է, հիմա էլ էկել-ընկել է հայ երիտասարդի կամ ուհու մեջները...
Ավելի շուտ՝ մտել է մեջները ու հետո՝ **դրե՛լ է** մեջները... Բայց հայ
երիզորդն ավելի վատ վիճակում է, խեղճացած-զցված է մոտավորապես
փայծաղի կողքերը... Որովհետեւ նրան նորմալ ուտելիք չեն տալիս:
Խեղճ հայ երիզորդը սպասում է նախաճաշի, իսկ էս պիդրները
նախաճաշի տեղը **lunch** են ուղարկում... Բա ի՞նչ անի հայ երիզորդը,
ինքը նախաճաշ է ուզում... Завтрак ծայրահեղ դեպքում... Լավ, գոնե
breakfast... Բայց չէ, երիտասարդ **piece of shit**-ը իրեն lunch է տալիս: Ու
եղպես հայ երիզորդը սատկում է ուժերի ծաղկման շրջանում, իսկ
ամերիկացի էշ երիզորդն էլ չի կարենում նորմալ ապրել, որովհետեւ
ինքը չի եկել մտել, **իրեն մտցրե՛լ են**... Ու դուրս է գալիս, որ մեզ մոտ,
16-ից 40 տարեկան «ոսկե» (այսինքն՝ «բաքե») երիտասարդության
կյանքը հիմնականում էսպես է անցնում. առավոտ lunch, այսինքն eating
(առավոտ ԶՈՖԻ չեն խմում իրենք... ԶՈՖՖԻ-ն բոյֆրենդի կամ

գռլֆրենդի հետ պիտի խմվի), հետո՝ «պտի մարդ տենան»՝ meeting... հարցնեն, թե ավտոն ո՞րտեղ է **փարքինգ** արել մյուս պիդրը (կամ պիդրուհին)... այնուհետ **քոնվերսեյշըն** է բացվում **սեշնի** մասին... session... (եդ բառն իրենց լեզվով նշանակում է մոդա... վա՛յ)... հա... հետո... հետո անպայման մի քանի փաստաթուղթ իրենք պիտի **քափի** (copy) անեն... every fuckind day պիտի գնան fitness-ի, որ ոռները մաշեն ու ղզղնածությունները անցնի միջից... Absolutely... Եդ պատճառով էլ ոչ նորմալ fucking գիտեն, ոչ էլ խելքը գլխին sucking... Փաստորեն, նրանց կյանքը կարելի ուղղակի կոչել shiting... ...Գուցե... Գուցերը շատերը կասեն՝ «Մենք համաձայն չենք ձեր («Ձեր»-ը՝ լավագույն դեպքում... Ի՞նչ «Ձեր», եթե կա՝ «Քո»...) մտքերի հետ, բայց... Կամ «Թեմաներ ու արժեքներ կան, որոնց մասին չի կարելի նման կերպով խոսել»... Ու հարց է ծագում. ո՞րն է չի կարելի... Ի՞նձ թե՞ քեզ... Եթե՝ ինձ, ապա քե՞զ ինչ... Եթե քեզ՝ դու էլ մի խոսիր... Ու մի կարդա ընդհանրապես... «Որոշ մտքերի ու գաղափարների շուրջ՝ կարելի է վիճել...»: Ե՛ վիճի: Մտի բաղնիք, քո համար վիճի, ինձնի՞ց ինչ ես ուզում: Չեմ սիրում ես կարծիքներ, չեմ սիրում, զզվում եմ... Հա, հենց Էդպես, լամփուշկի գործարանի չորրորդ արտադրամասի բանվորը պիտի Դայանա արքայադստեր մասին չխոսի... Նա պիտի լռի: Կամ կարծիքն արտահայտի իրենց տան բաղնիքում, որտեղ էլ անցկացրել է եր վաղ եւ ադ այնաքան վաղ մանկությունը... ձեռքերի աշխատանքով... հմուտ ձեռքերի խմբակն անցկացնելով բաղնիքում կամ զուգարանում... Մարդ բռնի ու... ոչինչ չանի դրանց հետ... Հա, շատ լավ բան է ոչինչ չանելը... Անգամ «Ոչինչ չանել» նշանաբան ունենալ հարկավոր չէ, ուղղակի դա պետք է թաքնված լինի հոգում, որ ցանկացած հիմարությունն անելու մտքից անգամ նա դուրս հորդի ու թույլ չտա անել դա: Ոչինչ չանելն

ինքնին բարեգործության տեսակ է, համաձայն չե՞ք: Ո՞չ: Ինչո՞ւ: Դե՛ն
նետե՞ք էս գիրքը, ձանձրացրի՞ք արդեն...

Բայց ե՞ր վերը նշված գործունյա կամ քաղաքական գործիչ կոչվող
ճահճացած զանգվածից բացի գոյություն ունեն նաեւ խեղճեր, որոնց էլի
ու էլի պետք է ձայն տալ, սիրել ու որ ամենակարեւորն է կարեկցել:
Նրանք էլ իրավունքներ ունեն... Ավելին՝ նրանք իրավունքներ ունեն...
Մարդու իրավունք: Նա կարող է ուրիշի կողմից գետնին նետված
ծխախոտի մնացուկը հանգիստ վերցնել, կոխել բերնախոռոչը, լիճած ու
վաղուց արդեն նեխած նարինջ վերցնել գետնից, ուտելով գնալ տուն,
մտնել իր քրքված ու տարիներ առաջ աբոյները պատից պլոկված
բարաքը, զուգարանի ծակից նաեյլ, թե ո՛նց է մորթուրի աղջիկը ոտները
չռած միզում, զբաղվել ձեռնաշարժությամբ ու ԵՍ ՆՐԱՆ ՊԻՏԻ
ԿԱՐԵԿՑԵՄ, քանի որ աղքատ է, անապահով եւ ունի բոլոր մարդկային
իրավունքները... Ունի, հա, ու գոռում ա ինքը դրա մասին, մտնում ա
քաղաքի կենտրոնը, «Ավել-ավել» կամ մեկ ուրիշ զգվանք գոռալով
անցնի քո տան մոտով, քեզ հանի քնից, քո դուռը զանգի, փող ուզի, իր
հոտը լցնի քո տունն ու դու կարեկցե՞ս... Հա՞... Պիտի կարեկցե՞ս...
Մանավանդ երբ միաձուլվի իր նման բազմաբույր զանգվածին ու ծեծ
ուտի դրա համար՝ էլի՞ պիտի կարեկցես... Հանուն ինչի՞ կարեկցես, ինչի՞
կարեկցես ե՞ր ձրիակեր մարդակերներին, ինչի՞... Չէ, էս զգվում եմ
ձեզնից ու չեմ կարող կարեկցել ձեզ, որքան էլ խեղճ լինե՞ք, ծեծված ու
ջարդված... Ես... Ես կարեկցում եմ դեռ պատանի այն զինվորին, որ
հենց հիմա կանգնած է սահմանի վրա եւ ամեն վայրկյան թուրքի
սնայպերը կարող է ակթարթում դադարեցնել սրտի բաբախյունը... Իսկ
դուք չուլ եք, անզգա ու ամեն ինչ լափելու պատրաստ... Ախր դուք...
աչքովս եմ տեսել... Ես վերջերս, հիմա, իմ ողջ մնալուց, 16 տարի հետո՝

մի տախտակ կնոջ էի հանդիպել, մտածում էի՝ գուցե դառնա իմ օգնականը, քարտուղարուհին կամ աղախինը մի հոգու մեջ: Ասեցի տանեմ թատրոն, գուցե կյանքից մի բա՞ն տանի... Մի խոսքով մտա թելը, որ հայաթում չլռչվի-խայտառակ անի ինձ, մտքումս երգելով Վիսնյկու՝ "Я не сла свою Беду, по весеннему по льду" երգը՝ հասցրի թատրոն, աթոռ դրինք, սստեցինք, հետո ես հիշելով, որ անկախ ինձնից այդ ներկայացումն արդեն 32-րդ անգամ եմ դիտելու՝ ասի շտապ հեռանամ վտանգավոր վայրից, մանավանդ «գուգընկերուհիս»... հերիք չի, որ անընդհատ աջ ու ձախ էր նայում, փորձելով գուշակել, թե որտեղ բեմը՝ նաեւ մի քանի գույգ ապուշագույն մտքեր արտահայտեց թատրոն հասկացության մասին ընդհանրապես...

Էդ պահին ես դուրս եկա դահլիճից ու մտածելով, թե ում եմ նեղացրե փոքր ժամանակ, որ անընդհատ պիտի էդ անտեր ներկայացումը նայեմ՝ հասա դռանն ու ելա բակը: Բակի կողմից, Տերյանյան թախիճը, Չարենցյան մուլեգնությունը ու Մեծարենցյան տիրությունը հոգումս՝ դուրս եկա Թումանյան: Իսկ հենց էդ հատվածի վրա... մի հատ շաուրմայանոց կա... ...կողքն էլ բանկոմատ: Ու հենց էնտեղ հիշեցի, որ լվածքի մարդուն փող եմ պարտք... Ես չեմ հասկանում, աշխարհում էդքա՞ն լավ մասնագնիտություններ կան, դաշնակահար, նկարիչ, քանդակագործ, վատագույն դեպքում՝ ազգային ժողովի նախագահ կամ ունիտազի խցանում մաքրող... որն էլ անպայման պիտի դառնա ազգային ժողովի նախագահ... Ես ձեր սերունդներին... գուրգուրեմ... по очереди... Բայց մարդ էլ ծնվի, իրան գուրգուրեն, պահեն, մեծացնեն ու ինքը դառնա... լվացքի մարդ... Այսինքն, փոխանակ դառնա մարդ՝ դառնում է լվացքի մարդ: Նրա մասին չի լինի ասել, օրինակ՝ «Ես ինչ կնոջ մարդն ա»... Երբեք չի լինի:

Որովհետեւ ինքը Լվացքի՛ մարդն ա... մեծատառով, ընդամին... Մի խոսքով, լվածքի մարդուց բացի, որոշեցի եղ հորթին էլ ցրել, եղ «քարտուղարուհուն», քանի որ արդեն վերջնականապես համոզվեցի, որ նա փայլում է սրտամաշ, բայց բնածին ապուշուքամբ ու սուբլիմացիայի ավելի քան հաճախ բորբոքվող նոպաներով... Ասի՝ «Բեր սրա փողն էլ քաշեմ, թող էնպես հեռանա, որ էլ պատմության քառուղիներում հետը չհանդիպեմ... Ասեմ,- «Աղջիկ ջան, վեր կաց ու սի... սիրահոժար կերպով հեռացի էն աշխարհից, որում ապրում եմ ես»: Ի՞նչ ասեմ, ասած՝ արած:

Էնտեղից շատ լավ երեւում էր, թե ինչ ա կատարվում շաուրմայանոցի ներսում: Ես նկատեցի, որ ազգս, ոչ միայն հասունացել է հոգով ու մարմնով, այլեւ լրիվ ըմբռնել է, որ «Յուլյա, Յավատ, Սեր, միասնություն, Ազգ, Պետություն,, դաշինք, միացում» ու բոլոր մյուս նվիրական գաղափարներն ու զգացմունքները՝ շաուրմայի մեջ են: Բոլորը ընե՛նց էին ուտում եղ շաուրման, ասես՝ զանգվածային մահապատժից առաջ, երբ իրանց հարցրել էին՝ «Ո՞րն է ձեր վերջին ցանկությունը»՝ բոլորը միահամուռ, միառժամանակ, միազամից գոռացել էին՝ «Շաուրմաաա՛»:

Ու եղ людоед- ների ամբոխի մեջ զատվեց, ավելի շուտ՝ զատվեցին մի զույգ... բայց, չափազանցրած կլինեմ, եթե ասեմ՝ աղջիկ ու տղա: Իրենք կանգնած էին շատ քիփ, բայց տարբեր տեղեր էին նայում ու չափից դուրս դանդաղ շաուրմա էին ուտում: Դա հաստատ նրանց կյանքի վերջին շաուրման էր, համենայնդեպս տղայի, որովհետեւ, եթե աղջիկը պատուհանից դուրս էր նայում, ապա տղեն ոչ մի տեղ չէր նայում: Տեսարանը սարսափազդու էր: Ես խոցված էի, բայց նաեւ հիացած... Իրենք երեկո էին անցկացնում: Իրենք խեղճ չէին, իրենց չէր կարելի կարեկցել, որովհետեւ իրենք իրենց գտել էին, ստեղծվել էին

իրար համար, մեկը մյուսի երկրորդ կեսն էր... Չնայած ոչ մեկն էլ առաջին կես չունէր... Տղան նման էր զոհված Յուլիոս Կեսարի կողմից գաղղիական երկարատեւ պատերազմում զոհված ու մի ամիս չթաղված ստրուկի... իսկ աղջիկը... այջիկը... դա... աղբանոցի փերի էր, ասես հենց նոր կանալիզացիայից դուրս եկած *русалка*... Էն փաստը, որ Էդ, շատ ներողություն՝ աղջիկը, ոտերը թրաշում ա մինչեւ ծնկներից էրկու սանտիմ վերել՝ ոչ մի դատապաշտպան չէր կարող հերքել... Անգամ Մայքլ Ջաքսընի ջիուդ ու հայ դատապաշտպանները միասին վերցրած... Ես անգամ պատկերացրի նրանց սեքսը... Դա... Մի խոսքով... Դա անհնար պատկերացում էր, անհիմն ճիգ՝ վերարտադրել երկու տավարի քրտնախառն գզվռտուկը... Դա... մի խոսքով... Յետո կտրուկ արթնացա իմ պատկերացումներից, որովհետեւ նկատեցի, որ տղեն... տղեն՝ շաուրման... թղթով ա ուտում... Չէ, ինքը նորմալ կերել է մինչեւ Էն տակի մասի փաթաթած թղթին, որը շաուրմայի ամենատակը չի, համարյա կեսին է հասնում... Թուղթը փաթաթում են, որ շաուրմայի միջի քաթերը ուտելու ընթացքում չթափվեն... Ոչ մի կաթիլ թշնամուն... Ու ինքը չի ջուկե, որ հասել է Էդ թղթին ու անցել է Ռուբիկոնը... Մոտավորապես էրկու-երեք սանտիմետր... արդեն կերել է ինքը... Բավականին էլ հաստ ա Էդ անտեր շաուրմայի թուղթն, ախր...

Ըտեղ ես բանկոմատ-մանկոմատ՝ սաղ մոռացա, կարտը կոխեցի ջեքս ու գյոգերով մոտեցա պատուհանին: Ինձ հետաքրքրում էր՝ մինչեւ ե՞րբ է ես անասունն ըսենց թղթով ուտելու... Աղջիկն էլ գոնե մի վայրկյան չի նայում վրեն, որ տենա ասի՝ «Էս ի՞նչ ես անում, այ տավար, այ տավարի ցավ...» *Скотина*... Եզը մի սանտիմ էլ կերավ... Մտքովս անցավ՝ թռնեմ թատրոն, ելնեմ բեմ, ներկայացումը կանգնացնեմ ու հանդիսատեսին ասեմ՝ «Էս ի՞նչ եք նայում, այ հարիՖներ, հլը մի հատ

սենց սաղորձ հելէք Թումանյանի շաուրմայանցի մոտ»... Ես ինչ-որ տեղից լսել էի, որ թղթով շաուրմա կերող եղել է, բայց ջոկել է... մի քանի վայրկյանից... Բայց ըստնց բա՞ն... Ուշադիր նայում եմ... ըհը... կես սանտիմ էլ գնաց... Ու եթե ինքը քսան վայրկյանում էլ չջոկեց, որ թղթով է ուտում՝ ուրեմն վերջ, շաուրման կարծնի, թուղթն ու ինքն էլ հետը: «Վերջապես կարծնի եդ տղեն իրա կյանքում մի անգամ, արա՛» ջոկեցի ես... Ես սաղ արվում է օրգազմի համար... Ավելի ճիշտ՝ օրգազմի փոխարեն... Անասուն, բոզի տղա, ի՞նչ ասես... Չգիտեմ, ինքը կարող է թանն է՞լ էր խմում բաժակով, դեհ, բաժակի հետ, սիգարետը ծխում էր մինչեւ ֆիլտրի են մասը, որ բռնել չի լինում... Ու ննքը ստիպված կուլ է տալիս... միշտ: Չգիտեմ...

Բայց հանկարծ ինքը ջոկեց: Ու ջոկեց ոչ թե թղթի համից, այլ, երեւի զգալով, որ շաուրման պրծնում է ու ինքը, մեկ ա՛ չի կշտանում, երեւի ասեց՝ «Նայեմ-տենամ ինչքա՞ն ա մնացե տակը»: Ինքը տեսավ... Տեսավ, որ թղթով չորս սանտիմ արդեն կերել է: Չորս սանտիմ... Ինձ թվաց, որ հիմա կվատանա, բայց ինքը լրիվ անտարբեր, առանց դեմքի վրայի որեւէ մկան իսկ շարժելու՝ թուղթը իջացրեց մի քիչ (շատ քիչ)՝ ներքեւ ու էլի առանց որեւէ տեղ նայելու շարունակեց ուտել...

Ես... Ես հեռացա դեպքի վայրից: Ինձ տանջում էին անդրշիրիմյան աշխարհի բոլոր չարագույն ուժերը... Լուսինը ծածկվել էր... Ասես Ծիր Կաթին համաստեղության բոլոր գամփռ շներն ընկել էին հետեւիցս... Մի քանի հատ էլ՝ Մեծ Արջից... Ես հուսակորույս էի եւ անմխիթար... Ես թույն էի ուզում... Տիկուտա... Կամ կանտարելա... Ես ոչ մի բան չէի հասկանում... Չէ... Ես թույն չէի ուզում... չէի ուզում հանգիստ մեռնել... Ես ուզում էի ջարդուփշուր լինել... Մի անգամ ընկա սառույցի վրա... Ես չէի ուզում բարձրանալ... Ես ուզում էի, որ ինչ-որ մեկը մահափորձ անի

իմ դեմ... դավադիրները հետեւից թրատեն... կամ բռնեն՝ խոշտանգեն:
Լավ, գոնե ծեծեն... Գոնե մի հատ ապտակեն... Ես ուզում էի լաց լինել...
...Ու ոչ միայն: Ես ուզում էի որ ինձ մի անգամ էլ սպանի Նա, ով այդ
ժամանակ գնացել էր իմ գրկից: Արդեն մի քանի ամիս... Ու ես նրան,
կարող եմ վստահաբար ասել, որ սիրում էի... Նա էլ ինձ, կարծում եմ:
Նա մոլորված էր մինչև ինձ հանդիպելը... Մոլորված ու համարյա
չխոսող: Չխոսող կին. դա ոչ թե երազանք է, այլ բաղձանք: Երբ նոր էինք
ծանոթացել՝ նա չէր խոսում բոլոր վայրերում ուր միասին գնում էինք,
կլիներ դա ռեստորան, ընկերներիցս մեկի տունը, թե ինձ մոտ: Նա
տառապող կերպար էր: Նա տանուլ էր տվել կյանքը... Նա ուզում էր
հայտնվել այնպիսի նոր միջավայրում, որը դուրս է երկրի սահմաններից:
Դրա համար նա կռվել էր իր կյանքի վերջին հինգ տարին... Այդ
պայքարն, ըստ իս դաժան ու ձանձրալի էր եղել... Բայց նա «վիզ էր
դրել», ինչպես ասում են... Հա... Վիզ դնել... ոչ մի լեզվում, իհարկե, չկա
դրա հոմանիշը Put a neck... Mettait le cou, mettere collo ... Վիզ դնելը
միայն պատմական առումով է հեշտ պարզաբանվում... Օրինակ,
Ադոլֆին, երբեք, ոչ մի պարագայում, անգամ 45-ի ապրիլի վերջերին ոչ
ոք չէր կարող ասել՝ «Վատ բան ես անում, брат, բոլ ա, հասկացանք,
թարգի»... Ինչո՞ւ... Որովհետեւ Ադոլֆը վի՛զ էր դրել... Վիզ էր դրել էդ
մարդը ու վերջ, խաղ չկար... Բայց մյուս կողմից՝ Ստալինն էլ էր վիզ
դրել, չէ՞... (Աղջկա մասին եմ պատմում, չեմ մոռացել հանգստացեք)
Հա... Իսկ Ստալինի դրած վիզը երբեք, ոչ մի պարագայում չես
համեմատի ոչ Ադոլֆի, ոչ Չերչիլի ու ոչ էլ ինչ-որ ամերիկացիների
ատոմային ռումբերի հետ... Էնպես որ՝ վիզ դնելուց առաջ՝ մարդ պիտի
իմանա իր վզի դիմացկունության չափսերը... Հա՛... Համաշխարհային
պատմության մեջ վզեր են, որ դրվել են... Ու միշտ չի, որ դա լավ

վերջաբան է ունենում... Նապոլեոնը վիզ էր դրել՝ կերավ մռթին...
Տրոցկին, ախմախը՝ վիզ էր դրել՝ գլխին կերավ... սառցահատ կացինով,
ընդ որում... Էհ... Дураком ты был, Лев Давидович, не умный...
Հա, լավ, հանգստացանք՝ էդ աղջիկը... չխոսող աղջիկը... Մի խոսքով,
վիզ էր դրել, որ կյանքում մի անգամ դուրս գալ երկրի սահմաններից...
ու մեր ամենասիրատենչ պահին՝ հանկարծ ասաց, որ որ մոտ օրերս
Չեխիա է գում... սովորելու... մի տարով... կատարելագործվելու
համար... Նման բան միայն հայ կինը կարող էր ասել... Չխոսել, չխոսել
ու ամենանեղ իրադրության մեջ՝ նման բան ասել... Անգամ մի էջ երգ
կա, լսած կլինեք՝

Կեսգիշերին, ես ու յարս միայսին

Նստած էինք մեր պատուհանի տակին

Խոսում էինք մեր լավ ու վատ օրերից

Ու մերթընդմերթ՝ համբույր քաղում իրարից

(Չես ջոկում, էդ համբույրը կանեփի թուփ ա, ինչ ա, որ ԶԱՂԵՍ... Բայց
կարելորդ առջեւում է)

Հանկարծ յարս, ուշագնաց աչերով

Ինձ գրկեց աղի արցունք թափելով...

Ասաց գնա՝ ու էլ ինձ երբեք մի սիրի

Ինձ խլում եմ են քեզնից, տալիս ուրիշին...

Ասա այ... աղջիկ... Ո՞նց ասես, Է՞, սա շատ հայկական արարք է... Եթե

դու այ... աղջիկ, էդքան բան գիտեիր (որ պոի քեզ խլեին ու տային

ուրիշին)՝ էլ ԻՆՉԻ՞ ԷԻՐ ՍԿԶԲՈՒՄ ԷՆ ԽԵՂԾ ՏՂՈՒՆ ՀԵՏ

ՓԱՂԱՔՇՎՈՒՄ ու մանավանդ՝ «Ու մերթընդմերթ՝ համբույր քաղում

Նրանից» Ու քաղվում նաեւ... Պտի համը հանեն, էլի, անպայման...
Կարող էր, չէ՞, սկզբից ասել, որ էսպես-էսպես, դեպք ա պատահել, ինձ
տանում են, ախպեր... Բայց, չէ՞, ոնց կլներ... Պիտի համը հանկարծակի
հանվի, չէ՞... որ մարդն ինչքան կարա՝ իրան վատ զգա... Ու նաեւ՝ ինչ ա
եղե՞լ որ, առիթ ա, մի քիչ **քաղենք**, հետո կասենք... Բա՞... Ու
սովորական երգեր չեն սրանք, ժողովրդական երգեր են, եւ իհարկե՛
ժողովրդի բնույթն են արտահայտում...

Յա... Ինչ էի ասում... Յա... «Մի տարով, գնում եմ սովորելու»... Էն էլ
Չեխիա, Էն երեսեսունվեց տարեկանում... Ես ասացի,- «Աղջիկ ջան,
երեսունվեց տարեկանում մարդիկ մեռնում են, ի՞նչ սովորել... Ու հետո՛
կարող էիր նախօրոք ասել դա ինձ, գոնե մի երկու ամիս առաջ... Ինքն
ասաց,- Բոլորը եկան, իրենց առաջ անցան, ես մնացի տեղում ես, բա
հիմա ես չգնա՞մ-բակալավրի կոչում ստանամ, գամ ու դրանց... հենց էդ
ակնթարթին հասկացա, որ նրան արդեն չեմ սիրում... Բայց չկարողացա
դա միագամից ասել... Քիչ չի արածը լկտիությունն է, դավաճանություն՝
հիմա էլ ես նեղ պահին՝ Չեխիա... Ուշադրիր լսեք՝ ոչ Շվեդիա, ոչ
Ֆինլանդիա, ոչ ԱՄՆ, ոչ Իտալիա, ի վերջո... այլ Չեխիա... Ես հասկացա,
որ ինքն իմ համար գոյությունն չունի... առհավետ... Ես սիրում եմ, մեկ է
սիրում եմ, բայց ոչ իրեն... Ես սերն եմ սիրում... Իմ սերը... Իմ սերը, այլ
ոչ նրան, ով իր մեջ կրում է դա... Ու որքան էլ ինքը տուժտա էր, սերն ի
վերջո ի՛ր մեջ էր հյուընկալվել... բայց էդ հյուըրին պահպանել է պետք, չէ՞,
հյուըրասիրել... Ես արդեն չեի սիրում, բայց ընկնում էի... ընկնում էի,
որովհետեւ

երկիրը ձգում էր մարմինս իրեն

կուզեի գոռալ, բղավել, հաչել

Իմ սերը չուզեց, որ իրեն սիրեն,
ու գերադասեց հեռանալ-փախչել:

Իմ սերը չուզեց, որ սիրեն իրեն:
Իմ սերը չուզեց, որ իրեն սիրեն

Նրան դուր եկան համբույրները իմ
եւ անկողինը՝ այդքան բաղձալի...
Բայց շարունակեց ճանապարհ հին
որն իրեն տարավ գիրկը անցյալի:

Իմ սերը չուզեց, որ իրեն սիրեն
Իմ սերը չուզեց, որ սիրեն իրեն:

Նա կարոտում է, ի՞նչ արած, կանցնի,
Ե՞ս եմ կարոտում, ե՞ս կընկնեմ ցած...
Իմ սերը՝ սերս մեկին կհանձնի,
որ կտորրի պտուղն իմ ցանած:

Կանցնեն ամիսներ, կամ էլ կես տարի,
իմ սիրո համար կդառնամ Եժան...

Գուլցե ես մնամ հանգիստ ու բարի,
իսկ գուլցե դառնամ անմիտ ու դաժան:

Իմ սերը չուզեց, որ իրեն սիրեն...

Իմ սերը չուզեց, որ սիրեն իրեն:

Թե ինչ կլինի... Ես լուրջ չգիտեմ,
տարածությունն է հիմա թշնամի...

Գլուխս կոտրեմ, մազերս փիտեմ՝

իմ սերը անշուշտ նույնը չի անի:

Մի՞թե նա ուզեց հենց այս վատ ամսին,

որ դեւերը չար՝ հոգուն իմ տիրեն...

Ու ես տիրեցի, տիրեցի քանզի՝

իմ սերը չուզեց, որ իրեն սիրեն...

Ու ինքը (Չատ գրեցինք, չէ՞ նրա մասին), որ կյանքում չէր խոսել իր ազգի մասին (ինչ խոսեր, երբ անընդհատ լռում էր) հանկարծ սկսեց Չեխիաից Էմեյլներ ու մեսսեջներ ուղարկել՝ ամեն տեսակի հայասիրական թեմաներով... (Ես էդ հայասիրությունն էլ չհասակացա, եսասիրության պես մի բան է, դու հայ ես, հայերին ես սիրում, ինչ ես հետույթդ պատռում) Այ, եթե որեւէ ֆրանսիացի կամ ամերիկացի լինի հայասեր,

կասես, հալալ ա ես մարդուն, չնայած դա էլ նրանց համար է փող
աշխատելու միջոց, հայագետ ես, փոր ես ստանում դրա համար, ի՞նչ
կա... Բայց չէ, բոլորը, միալամուռ, մանավանդ սփյուռքահայերը խեղճին
մատնացույց են անում՝ «Աման, աս մարդկ հայերեն կխոսի»... Բա
ինչե՞րեն խոսի, աղ սեմուշկի կլեպ, էդ էլ իրա գործն է, դու որ անգլերեն
ես խոսում, ամերիկացիներն ասում են՝ O my god, his speak in
armenian!!!

Ի՞նչ էի ասում...

Չէ, հաստատ, մի մարմնավաճառը, մի օրում ավելի շատ օգուտ կարող է
տալ, քան անկախ ու կախված Հայաստանի բոլոր թերաճած
կառավարությունները, անթրաշ ազգային ժողովներն ու ճիճու
նախագահները, անառնադամ ընդդիմություններն ու մսածած
անպաճույճ առարկաները միասին վերցրած... դա հաստատ... Մի հատ
չայի բախչա են սարքում, սաղ կառավարությամբ գնում-կանգնում են
դեմը ու ամբողջ հանրապետության տեսախցիկները ուղղվում են
վրաները... Մեկն ասի, արա, այ... տղեք, Բրեժնեւը մեռել ա, չեք ջոկո՞ւմ,
որ հին ու զգվելի բաներ եք անում... Դրսից էլ մի հատ կղկղանք են
բերում... գոծարար կոչված մաշած մեշոքները... ու գնաա՛աց
գովազդը... Եսիմինչ ...ազլուխը արդեն Հայաստանում... Հա... Ու երեւի
անցյալում էլ է եղպես եղել... Պատգամաբերը մտնում էր հայոց
թագավորի մոտ եւ ուրախ-ուրախ հայտարարում՝ «Ահա, ինդրեմ, տեր
արքա, հռոմեական լեգիոններն ու հեծյալները արդեն Հայաստանում»...

Արքան էլ, ժողովրդին թողած՝ ընտանիքն առնում ու բարձրանում է լեռները... հռոմեական զորքերի հետ **Tête à Tête** հանդիպումը ուղղակի չէր մտնում նրա պլանների մեջ... Ու միշտ եղպես է եղել... Պարսից այրուձին արդեն Յայաստանում, արաբական զորքերն արդեն հայաստանում, մոնղոլ-թաթարներն արդեն Յայաստանում, թուրք սելջուկները ու բնածին էշուրյունը՝ վաղուց արդեն Յայաստանում... Եղ է ամբողջ պատմությունը... Մի տավար արտահայություն էլ կա, չէ՞, որով արդեն քանի տարի է դրած կենակցում են ազգաբնակչության հետ... «Աննախադեպ առաջարկն» է դա... Ու դա էլ է պատմական... Բա ո՞նց... Կարելի է ասել, որ ամբողջ պատմությունն է անցել աննախադեպ առաջարկների մեջ... Կոշիկը տաս տոկոս էժան՝ աննախադեպ առաջարկ է, ինչ խոսք... Ավանդը կես տոկոս շատ, սա էլ է աննախադեպ... Բայց ամենաաննախադեպ առաջարկն, իհարկե, ասենք, կանանց կողմից կարող էր լինել, բայց չկա, ասեք,- **Պամ մոտո գիշերը մամ, ընթացքում էլ մորս չգանգեմ ու ասեմ, որ ընկերուհուս տանն եմ, ընկերուհուս էլ չգանգեմ-չզգուշացնեմ, որ եթե մամաս գանգի՝ ասա ինքն էկավ, բայց լավ չէր զգում, քնած ա**»... Չնայած երբեմն լինում են կանայք, որ հանգիստ գալիս են, մտում (չնայած, մեկ է, վերջում պիտի արտաթորանքը հանեն ջրի երես), բայց նրանց շուտափուլթ խեղճացնում են, Արդահանից մինցել Թավրիզ տարածում են, որ ինքը «բոզ ա, ախպեր»... Յա... Սրանք արդեն սկսել են այլանդակ կանանց սիրել... այլանդակ՝ բառի բուն իմաստով... որովհետեւ... եթե... եթե մարդու կամ կնոջ մասին մի բան ասում են՝ նա պարտավոր է դա արդարացնել... Պարտավոր է ու վերջ... Եթե քեզ կոչում են «գեղեցիկ սեռ»-ի ներկայացուցիչ, ուրեմն այդ սեռի ներկայացուցչուհին պիտի արդարացնի կոչումը, հակառակ դեպքում նրան անհրաժեշտ է

փաթաթել հաստ ցելոֆանի տոպրակի մեջ, գցել նուբարաշենի աղբանոցը ու մի տաս տոննա էլ բետոն թափել վրան... Չնայած նման աներես արարածը էնտեղից էլ դուրս կգա... Ու նաեւ, տավարի հաստ ջիլ աղացող գործարանային մասդացով՝ տասից-քսան անգամ լա՛վ աղալ է պետք էն տեսակի չոբանի փրչոտ շներին, որ ասում են (ասենք)՝ «Ճիշտ ա, եդ աղջիկը տեսքով էնքան էլ աչքի չի ընկնում, բայց... լավ հոգի ունի»... Նախ էն փաստը, որ այդ ռաբիզապաճույճ նախադասության մեջ գործածվում է «ինքը տեսքով էնքան էլ (պատկերացնում ե՞ք՝ ԵՆՔԱՆ ԵԼ...) աչքի չի ընկնում» արտահայտությունը՝ լրիվ դուրս է խաղի կանոններից, որովհետեւ ինքը էնպե՛ս է տեսքով աչքի ընկնում, որ տեսնողի մոտ (մանավանդ՝ հանկարծակի տեսնողի) անհապաղ սկսում է էնթերոկարդիտի հանկարծահաս նոպան, խեղվում է կենտրոնական նյարդային համակարգը, անվերադարձ կորչում են տեսնելու, լսելու, համի զգացումները եւ մարդն անկարող լինելով այլեւս շարունակել կյանքի բանական ուղին՝ խեղվում է ու չի բացառվում, որ հետադայճ ապրելով դեպի կապկակերպ կենդանին՝ իր թեկնածությունը դնի ԱԺ պատգամավորական ընտրություններում...

Բայց ցավն այն է, որ «գեղեցիկ սեռ» հասկացությունը գետնին հավասարեցնող կրետին-կինը՝ հանգիստ չի մտում իր գորիլայական դիրքերում... Նա սողոսկում է (կոնկրետ, սողալով, կամ չորեքթաթ) առավելապես քաղաքական մթնոլորտ... Հա... Նման զագրանքներն իրենց այնտեղ ավելի կոմֆորտ են զգում, քան ճանճերը քաթի մեջ)... Նա անարդարություններ է հայտնաբերում կառավարվող երկրի, պետության, հասարակության ու էլ չգիտես թե որ ...ության խորքերում... Նա զգվում է ամեն ինչից, ատում է շրջապատին,

հեռուներին ու մոտիկներին, նրա կյանքում գործածության չդրված անճոռնի հեշտոցը դեւի երախի պես լոջվում է մինչ անեզրություն... գարշածին հրաբուխից ճոճ է գալիս շրջապատը, ու լավայի փոխարեն սկսվում է թույն ժայթքել ամեն կենդանի արարածի վրա... թույնը թափվում է ոչ միայն հիշյալ տիրահռչակ վայրից, այլ դիվային ատամնատակերից, խոզի ականջներից... աչքերից... կներե՞ք՝ ուզում էի ասել հավի բորբոքված հեշտող հիշեցնող առանցքներից... Նա բեմ է բարձրանում... Նա միքրոֆոնն է տանում բերան կոչվող աղբահորը... Նա ծծում է միքրոֆոնը... Նա ահռելի մեծ ցանկությամբ ուզում է ծծել ամեն ինչ՝ տանիքի տակից կախված սառցալուլայից սկսած, Յայրենիքի կենսահյուրթով անցած ու իր նման անշարժ գույք հանդիսացող բաշիբոզուկների միզասեռական օրգաններով վերջացած... Նրա ատելությունն աշխարհի նկատմամբ ավելի մեծ է, քան իր ուռու գլուխը... Նա մեղադրում է... նրան ճնշել են... փոփոխություններ են պետք... թող կորչեն իշխանությունները, որ ծծում են հասարակ ժողովրդի արյունը... Ինչո՞ւ են ծծում, ի՞նքը պիտի ծծի... Բայց ո՞նց, ո՞վ կանի դա... Փրկություն չկա, եթե անգամ մահապարտներից բաղկացած ութ ջոկատ, մի տարի շարունակ, օրը երեք անգամ հազնի դրան՝ մեկ է, նա բան չի զգա, անասունը... Իսկ իր նման անհաջող սերունդների մնացորդները հավաքվում են կողքը... բա ո՞նց... եկել, եկել է մեր Ահիրմանը, մեր Սայթանը... մեր Պրոզերպինը... Նա խելոք է, նա պայթարող է, նա անհանդուրժող է... Եկեք լպստենք նրան... Իսկ նա չի ուզում լպստվել, քանի որ վատ կզգա, կխրտնի... նա ուզում է, որ իրեն ծեծեն, լիսկեն, ջարդուկտուրդ անեն, որ բղավի՝ «Ահա, տեսեք, տեսեք ինչ արեցին մարգարեին»... Ու սա միակ, միակ դեպքն է, որ դես կարող ասել՝ «Վայ ես ձեր մարգարեի...», որովհետեւ չես կարող, չի ստացվի,

կմեռնես... Ու լրագրող կոչված մայրապիղծների լեգիոնները նրան
դնում են պատգարակի վրա ու հետո... դնում են մեր դեմը... Ու մենք...
մենք ստիպված են տեսնել ու լսել դրան... Հա... Ու աշխարհի բոլոր
մարդաբանության ինստիտուտները կյանքի էդ տեսակին կարող են
անվանել female human... ու որը կարող է... իրավունքներ ունենալ...
Բայց մեկի մտքով չի անցնում էդ female human-ին լուսանկարել (եթե,
իհարկե, լուսանկարչական խցիկը ընթացքում չդեֆորմացվի) ու կողքին
դնել, ասենք Ամորի-Դյուվալի «Վեներայի ծնունդը» գեղանկարը... Ինչի՞
չեն անում էդ բանը... Ինչ համեմատություն ասես նկարում են, էլ էշի
թուռակը ու արաբական նժույզը... էլ ԿԱՄՈՒԿԱԴ-ը ու ամենավերջին
Continental GTC Speed BENTLEY-ն... Բա ի՞նչ անես... ի՞նչ միավորով
չափես... Թուհ... ՉԷ... ՉԷ... Ու ով, ինչ ուզում է, թող բարբաջի՝ ես
կասեմ, որ վերոհիշյալ գաղջանյութը ոչ կին է, ոչ մարդ, ոչ գորիլա, ոչ էլ
ֆիկուսի թուփ... Այն, ինչը որ նա է՝ ունի ընդամենը երկու վանկ՝ ՉԻ-
ԲԻԼ... Ու էդ գիբիլը դնում են մեր սեղանին, մեր սեղանին են դնում,
մեր... Դնում են... փոխանակ վառեն ու հազար մետրի վրա ծածկեն,
որովհետեւ կյանք չես տա դրան, իսկ եթե սխալվես ու տաս՝ քոնը
կկորցնես... Մերը... Մարդկությանը... Դե մի անգամ էլ հաշվի առնեք,
թե որն է թանկ... Թուհ, ձեր մարդ կամ կին ասողի վրա...

Որովհետեւ անմիջապես իմ ողջ մնալուց հետո՝ ես հիվանադասցա
շրջապատին դիտարկելու անհազ ցանկությամբ: Վերադարձա ու ինձ
համար ամեն ինչ անսովոր էր: Ինչ-որ մի բան փոխվել էր մարդկանց

հայացքում... ես չեմ խոսում քայլվածքի եւ մարմինները
ծեւափոխումների մասին, դա բոլորն էին նկատում: Յետո, երբ անցավ
առաջին ձմեռը... հեշտ է ասել, չէ՞... առաջին ձմեռ... Մանավանդ վերջին
«մեռ»-ը... առաջին ձմեռ... ընդամենը երկու բառ ու վերջ... Մի խոսքով.
երբ մարդ հասկացություն տեսնելու դեպքում փողոցային շները փոքր
ինչ տարակուսում էին «միանգամից ուտե՞նք, թե՞ մնա տաս րոպե
հետո»՝ ես նկատեցի, որ մարդիկ... ուրախ են ու ժպտում են... Դա ինձ
կատաղեցրեց: Նրանք դարձել էին ավելի միասնական, քան շարժման
օրերին: Հսկայական բողբոջի վերածված երկրի բնակիչները ժպտում
էին ու միասնաբար կողոպտում մեկը մյուսին... Հասավ էստեղ, որ
ականա մտածեցի՝ սրանցից որեւէ մեկն ընդհանրապես տեղյա՞կ է, որ
պատերազմ է եղել... ու ընթանում է... Մի քանի ժամ լույս,
հեռուստացույց, բանկեր, բենզինակռիվ ու միմյանց հիմնահատակ
լափելու մազոխիստական անհագուրդ դրսեւորումներ... ամեն
քայլափոխի... ու ժպտալով... Նրանց ձմեռային «Մահը մերն է, մենք
մահինը» հայացքն ասես թելադրում էր՝ «Զհամարձակվեք սիրել ինձ,
կմորթեմ»... Հայացքը... Այդ հայացքը... Թեեւ հայացք հասկացությունն
ընդհանրապես՝ ամեաարագ փոփոխությունների ենթարկվող
պլաստիլինն է... Ժողովրդի հայացքը... Բայց այս անգամվա
փոփոխությունը ամենավայրագն էր... Նրա մեջ ամեն ինչ կար...
ստորացվածները երկրպագում էին ստորացնողներին, բայց գոռում էին
«Հեռացիր»... Էլ ե՞րբ էրբ պատմության մեջ եղել հայացքի այսօրինակ
փոփոխություն... Դարեր շարունակ փոխվել են բազմահազար ազգային
հայացքներ... Բայց այդ պահի հայացքն ուրիշ էր... Ու հիմա, տասնյոթ
տարի անց այն արդեն ոչ թե հայացք է, այլ նահատակված էշի քուռակի

քաբ՝ դա կրկին անվանվում է «Ժողովրդի ազատության ձգտող»
հայացք... Ու թե մեկը փորձ կատարի իրենց կողքին չլինել՝
հայացքատերերը անհապաղ դառնում են նրանց դահիճները: Ու նրանք
արդեն անթաքույց հայտարարում են՝ «Եթե մեր հետ չես՝ բոզի տղա ես»:
Նրանք չեն տարակուսում իրենց մայրերի բարոյաեպիկական կերպարի
մասին, քանզի իրենց անվանում են «Ժողովուրդ»... Այդ պատճառով էլ
իրենց չի կարելի անվանել «բոզի տղա», քանզի մեջները աղջիկներ էլ
կան... Կանայք... Անատամ ու անթրաշ... Որ, երեւի՝ ուրախ կլինեին բոզ
լինելու համար, բայց չեն կարող, որովհետեւ ո՞ր գիժը փող կտա, որ
հետները լինի... Անատամների դեռ հետ կարելի է... Բանտում... Տասյոթ
տարի նստելուց հետո... Բայց մեկ է, հայացքին չես դիմանա... Դա լրիվ
ուրիշ, նոր հայացք է: Թարս նայել չի, ոչ: Նրանք այլեւս թարս չեն
նայում: Նրանք ուղղակի նայում են... Նայում են ու վերջ: Նայում են ու
դրանով մարդու դնում են դժվարին կացության մեջ, որովհետեւ չի
լինում նկարագրել, այդ հայացքը... Ի՞նչ ասեմ, եթե նախկինում, ասեմք,
մի քսանհինգ տարի առաջ, նրա (Ժողովրդի) հայացքում նկատվում է,
ոնց որ ընդունված էր ասել՝ վստահությունն վաղվա օրվա նկատմամբ,
հիմա մնացել է միայն վստահությունը երեկ չէ առաջին օրվա
նկատմամբ: Դրան միայն գումարվել է սեփական վստահությամբ՝
դիմացինի վստահությունը վերացնելու տեսարանի անբեկանելի,
«խաղաղ» տարիների ընթացքում կոփված եւ կատարելությունն դարձած
արհեստավարժ կատարումը ու աստելությունն ցփնելու
պատրաստակումությունը...

Նրանք վստահ են ամեն ինչի նկատմամբ: Չկա անվստահության ոչ մի նշույլ... Նրանք վստահ են, որ ոչ մի լավ բան չի սպասվում իրենց, ու վստահ են, որ բոլոր լավ բաները սպասվում են դիմացինին:

Ու այդպես վստահ էլ նայում են իրար, աչքերը չեն փախցնում: Մեկը հարցնի՝ «Ինչի՞ աչքների չեք փախցնում, հը՞... այ... վատ մարդիկ... Նայում են ու նայում: Բոլորն ապրում են սեփական կորուստներն անվերջ հաշվելով: Նրանց կյանքն անցնում է կորուստ հաշվելու ընթացքում: Իսկ թե իսկապե՞ս ինչ են կորցրել՝ դա ոչ մեկին չի հուզում, որովհետեւ վաղուց կորել է հուզվելու զգացումն ու մանավանդ ժպիտը: Ընդհանուր առմամբ՝ հայացք փոխվելու գործոնը բազմաթիվ նախապայմաններ ունի: Օրինակ, ես չտես ու հավի ուղեղով զինված ոչխարները՝ Յոլադիա կամ հոլանդացի բառը լսելով՝ միագամից ասում են, որ հոմոսեքսուալիստ է... կամ թմրամոլ... մեկն ասի թե չո՞ւ ինչ ես, այծի բալա... ո՞վ ես դու, որ քննարկում ես հոլանդացիների վարքը, ի՞նչ գիտես նրանց մասին, ո՞վ է քո անասնական եության մեջ ներարկել, որ եսինչ կամ էսինչ ազգը եսպիսին է... եթե ուզում ես իմանալ, ապա առաջինն անգլիացիներն աչքի ընկնում հոմոսեքսալիզմի գործում... քանակով... на душу население... Ու հայերն էլ, պետք է ասել, որ ոչինչ... եթե տեղը գա՝ ինչո՞ւ չէ, եթե կարող է օգուտ տալ... Հաճելին օգտակարի հետ... Ծայրահեղ դեպքում կարելի է զբաղվել դարերից եկած, դարերով կոփված ձեռնաշարժությամբ... Ինչ վատ է, որ, ոչ մի ուրիշ ազգ չի ասի, որ հայերը օնանիստ են... եթե, իհարկե, մի քանի վայրկյան չնայի հոգեսեռախտ արտահայտող աչքերին... Ի՞նչ վատ բան է, որ ձեռնաշարժությունը, մտածում են նրանք... Առավելությունները հազարն են, թերությունն չկա համարյա... Ինչպես ընդունված է ասել՝ երեւակայություն է զարգացնում, ում ուզես՝ հետը կլինես,

հիվանդությունն եւ անպատեհ հղիությունները բացառվում են... ի վերջո՝ տուն չես տանում վերջում... դա ամենակարեւորն է... Իսկ այ, որ ազգի հայացքը դրանից փոխվում է՝ ոչ մեկի չի հետաքրքում... հիմա հայացք է, էլի, կփոխվի...

Մարդիկ կան, որ մինչեւ հիմա Ռուսաստանի քարտեզին նայում են, թե չէ՝ կտրուկ ու աննախադեպ էրեկցիա են զգում... Ու բնական է, որ կնոջն ու քարտեզին նայելու հայացքները միայնգամայն տարբեր են...

Թեեւ իմ ժողովրդի ժպիտը կորել է շատ, շատ վաղուց, այն պահից սկսած, երբ Լուցիոս Լուկուլուսը ժամանեց Յայաստան եւ Տիգրան Երկրորդին (սույն ինքը՝ Մեծ) առաջարկություն արեց «Ս» տառը գրել նվաճված տարածքների վրա: Լուցիոս Լուկուլուսը չգիտեր, որ հայերը դեռեւս տառեր չունեն, լատիներեն են գրում (Մեսրոպ Մաշտոցը պիտի ծնվեր մի քանի դար հետո, Տիգրանը դրա մասին տեղյակ չէր, Լուցիոս Լուկուլուսը՝ առավել եւս): Ու երբ Տիգրանը, լատիներեն տառերով գրեց «Ս», որը, լատիներենում գրվում է հետեւյալ կերպ՝ «S», դուրս եկավ, որ հողերն էլի Տիգրանին են պատկանում: (Ժպիտը կորելու մասին եմ գրում, սպասեք)... Հա... Էդտեղ Լուցիոս Լուկուլուսը, կարծելով որ թե իր վրա ֆռռում են՝ հրավիրեց եսիմորերորդ (ինքը գիտի) լեգիոնին, իսկ Տիգրանակերտի բնակիչներն էլ լեգիոնին տեսնելով ցռեցին տակներն ու անցան հռոմի կողմը... Կողոպտվող Տիգրանակերտի գանձերը փրկեցին մահապարտներից բախկացած երկու ջոկատ... Որոնցից մեկն անպայման միտի նահատակվեր, մինչ մյուսը հասցներ դուրս բերել գանձերը գրավված քաղաքից... Դրանք հայերն էին: Մեռնելու իրավունք ունեցող հայերը, որոնց հիմա, յուրաքանչյուր «ազատության համար պայքարող մարտիկ» պատրաստ է կրճատատամը խրել կոկորդի մեջ... Արտաշատում Լուկուլուսին մի քիչ քացու տակ տվին

(ուշադրություն դարձրեք՝ արտաշատցիները կռվել են, հայերը՝ ոչ... ու չափազանց հետաքրքիր է, թե դարաբաղցիներն ինչ էին անում այդ պահին)... հա, Յոնան... Յետո Լուկուլուսին փոխարինեց Պոմպեոսը, որը Տիգրանին հանգստացրեց, ասելով՝ «Հանգստացի, տղա ջան»: Մի խոսքով, Յոնան իր գործն ի վերջո արեց, Ծովից Ծով Հայաստանը դարձավ Ցամաքից Ցամաք Յոնան-Պարսկաստան եւ հենց էստեղ ազգի ու ժողովրդի ժպիտը անդարձ կորավ, Տիգրան Երկրորդն էլ հասկացավ, որ եթե հետագայում իրեն Տիգրան Մեծ են ասելու՝ միայն էն պարզ պատճառով, որ ժամանակին գլխից մեծ քաթեր է կերել:

Իսկ Տիգրանի որդին, Արտավազդը, Էնպես ոչինչոտ ստրատեգ լինելով հանդերձ, դեբիլ-դեբիլ գնաց ու մտավ Մարկուս Անտոնիոսի վրանը... Խի՞ ես, օրինակ, գնում-մտնում խալիսի վրանը, կայֆա ա՞ տվել:

Պատկերացրիք, չէ՞, առաց զորքի, հենց Էնպես: Մարկուս Անտոնիոսն էլ, բջի տղեն՝ Նրան իսկույն բերման ենթարկեց Կլեոպատրայի մաշած բդերի մոտ... Ու դեռ թատերագրությամբ էր զբաղվում Արտավազդը, պիեսներ էր գրում, հունարեն (ասում են, որ «Տաքսի-տաքսին» ինքն է գրել... Դրանից վատ բան դեռ ոչ մի արթայորդի չի արել... Ի՞նչ ասես)...

Այո, ազգն իր ժպիտը կորցրեց այդ պահին: Բայց այդ պահը դեռեւս հուսադրող տարրեր էր պարունակում իր մեջ: Ազգը դեռեւս հասկանում էր, որ սեփական պետությանը, թագավորներին եւ իշխանությանը չսիրելն Էնթան էլ լավ բան չի, բայց ի՞նչ արած, եթե Էդպիսին է ծնվել:

Ի՞նչ անի, բնույթն է այդպիսին: Նրա մեջ բարեբախտաբար դեռ չէր մտել Երոպա-ամերիկանացման մանդավուշկան: Մի խոսքով՝ հասկանում էր, որ ինքն աչքի է ընկնում երկպառակություն անվանվող քաթլանությամբ

ու այնքան էլ լավ չի նայվում համընդհանուր հելենիստական աշխարհում:

Մի վայրկյան... Բայց ի՞նչ երկպառակություն... Երկպառակություն երբեք չի եղել իմ ազգի մոտ: Երկպառակություն կարող է լինել միայն մի դեպքում՝ երբ իրար կողքի կանգնած են երկու հայ: Իսկ մերն, ինչպես միշտ՝ ուրիշ է: Մերը բազմա-բազմա-պառակություն է: Multi-պառակություն... Այսինքն՝ որքան մարդ, այնքան պառակտվածություն: Իմ ազգն անգամ ուրախ է դրա համար... Ավելին, եթե կարելի է ասել՝ չպառակտված մարդկանց քարկոծել են... ինչպես հիմա... Ու երեւի գլուխ գովալու համար նման արտահայտություններ են եղել՝ «Երբ ես պառակտվում էի, դու ո՞ւր էիր... կամ հայիոյանք՝ «Վայ, ես քո չպառամկտված մորը...»: Ու ով որ չի պառակտվում՝ բռնում-գոռով պառակտացնում են...

Հա... Ժպիտը կորցնելուց մի քանի դար հետո՝ ազգը կորցրեց մարդկության պայծառ ուղեղների կողմից դարերով մշակված բարոյականության մասին պատկերացումը: Դա տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտից քսանվեց ժամ հետո, երբ իմացան, որ բարոյական հաղթանակ են տարել: Այդ փառապանծ բարոյական հաղթանակի ցնծալի պահից սկսած մինչեւ մեր այժմյան գերցնծալի պահերը՝ ցանկացած ծեծված աբիժնիկ՝ իրեն համարում է բարոյական հաղթանակ հասկացության հիմնաքարը... Չէ՞ որ՝ «Բարին միշտ հաղթում է» (թե ինչ եղանակով՝ ոչ ոք չգիտի, բայց հաղթում է): Կնշանակի բոլոր հաղթանակած բարիներն անբարոյական են, իսկ պարտվածները՝ բարոյական... Մակեդոնացին, Յուլիոս Կեսարը ու

Գարեգին Նժդեհն անբարոյական են, որովհետեւ համարյա պարտութիւններ չեն կրել: Ու վերջ: C'est fini...

Իսկ հիմա՞... Զիմա կա միայն դժգոհութիւն եւ անհասկանալի պահանջների շարան... Ամբոխը պահանջում է... Ազատութիւն է ուզում... Զա... Ու նա ուզում է խոստումներ լսել... Վա՞յ, բա դրանի՞զ էլ հեշտ բա՞ն... Վարեր շարունակ հնչել են դրանց խոստումները...

«...Գոռացեք, ոռնացեք, կլանչեք իմ անունը... Ես ձեզ կտամ այն, ինչ դուք չեք էլ երազել... Ինչի մասին չգիտեք անգամ: Ես ձեզ համար կփոխեմ երկրագնդի ընթացքը... Աշխարհաստեղծման օրվանից սկսած՝ ինձ նման թափանցիկահոգի շնչավոր չի եղել...»... Չիբիլանոց քանդող մուրացկանները կենակցեն թափանցի հոգուդ հետ... Էնպես, որ միջով անցնի ու ներըմբռնիսի հարազատներիդ մեջ... Թափանցիկ է, չէ՞... Թափանցիկ ու խոստումնալի... Ես ձեզ տանում եմ դեպի արդարութիւն... Մենակ ես գիտեմ դրա ճամփան... Ես: Իսկ դու, ժողովուրդ՝ դանդաղ արի ու կտեսնես, թե ուր կտանեմ ես քեզ ... Ժողովուրդ, ժողովուրդ, ժողովուրդ... Դուք եք ժողովուրդը, դուք, դուք, միայն դուք: Ես միանշանակ ձեր օրգազմի հիմնաաղբյուրն եմ... Ես Չենսն եմ, Օսիրիսը, Բուդդան, Մահամեդն ու Մարաթոնյան Ցուլը, Տանատոսն ու Զիպնոսիսը... Մանավանդ վերջինը... Չէ, հա, Զիպնոսիս... Իվան Սուսանին, մամայա... Եփիդնան ես դու, կիսակույս-կիսած, սիսալ սարքած Պեգասիսի վրա շնթած ու Եփիթնայի պես (Ехидна) ոտերը չռած... Չէ, չէ, Եփիդնայի ձագն ես դու, ամուսին կոչվող թուլէն... Ու սովորեցնում ես... մահվան... Բայց մինչ այդ պետք է գաղափարներ ներարկել դրանց... Էդ... Մարդկանց... Պետք է վարժեցնել... ինչպես հիմար արջերին կամ շներին կրկեսում... ու կատարած հիմարութեան համար՝ վերջում շաքար տալիս... Զա...

Առանց շաքարի կմեռնի համաժողովրդական պայքարի ջիղը... Հանուն հարնդհանուր արդարության եւ հավասարության համար պայքարի ստեղծման առաջին նախապայմանը՝ շաքարի կտորն է... վերջում... Բայց դա միայն լայն զանգվածների համար, իհարկե... Մարատները, Ռոբեսպիերներն ու Բրուտոսները դեմ են շաքարակտորին: Նրանց շաքարի հանքեր են պետք... Նման բաներ չկան, բայց «ինչեր ասես, որ չեն անի ամբոխները խեղաթյուրված»... Շաքարահանք... Ու ոչ մի հատ... Որ ստիպի կրկին գործածել ստամոքսահյուլթի պակասասից առաջացած գոմշտելու նոր ցանկությունը... Որ ամբոխը հանկարծ չզգա իր մեջ արթնացող անհատականության դառնությունը...

«Անհատականություն» էլ հանդես է գալիս «ամեն մեկս մեր համար» կարգախոսով, չնայած բորբոսնած բերաններից մանավանդ՝ մեր օրերի «Միացում»-ը... Եւ ո՞ւմ են ուզում միանալ էդ, ով ո՞ւմ միանա, ինչի՞... Ախր, հասկաց եք, այ կոտոշներ, որ էդ Միացումն էնքան էլ անվտանգ բան չի, զգույշ եղեք մի քիչ, որովհետեւ անզգույշ «միացման» ժամանակ, հնարավոր է, որ կարճ միացում առաջանա... Ափսոս, որ նման կարճ միացումները՝ այդքան էլ երկար են չեն գլուխները թողնում վզներիս...

«Միացում» գոռացողների գլուխն ու մարմինը շուտափույթ կերպով անջատում են իրարից... Իսկ ատելությունը դառնում է նրանց անբաժանելի սիրուհին... Ատելությամբ ներծծված մարդն ավավոր տգեղանում է, ճմռկոտվում, մաշկը սեւանում... Նա ուզում է անպապաղ բնաջնջել ամեն գեղեցիկը, որ եղել կամ հիմա կանգնած է իր առջեւում...

Ու բնավ զարմանալի չէ, որ ֆրանսիական հեղափոխությունից հետո, առաջին հերթին (կամ՝ հիմնականում) գիլիոտինի տակ էին չոքացնում ճերմակակամաշկ, գեղեցիկ կանանց... Երկրորդ հերթին՝ գոռացողներին, այնուհետ՝ իրենք իրենց: Ամեն ինչ իր հերթին:

Ու ինչպես միշտ, դրանց շարքերում հայտնվում է մի նշանավոր, կարելի է ասել՝ հարգված ու խելոք մարդ... Ցիցերոն, ասենք... (կամ Կիկերոնը, նույն... բանն է)... որ ինչ էշությունն ասում էր ու անում, ասում է՝ Յանրապետության շահերից ելնելով եմ անում: Բայց «Յանրապետության շահերից ելնելով» կարելի է պաշտպանել ու զորավիգ լինել Կասիոսի կամ Բրուտոսի նման ...գլուխների՞ն... Կազմակերպել Յուլիոս Կեսարի սպանությունը, տանը թաքնվել ու արտասանել՝ «Օհ ժամանակներ, օհ բարբեր»...

Չէ, հիմար էիր դու, Ցիցերոն, խելոք չէիր... Տասնինամյա Օկտավիանոսի մոտ լակոտ դուրս եկար դու, ի վերջո, *дишовка*... Չէ, իհարկե արժի եւ անգամ պետք է բոլորին էլ ֆռռացնել ու բոլորին էլ հետույք մտնել՝ հանուն երկրի կայունացման եւ խաղաղության: Բայց մի անգամ խաղաղություն եղա՞վ թո ժամանակ, այ Ցիցերոն... Մարդու անունն է՞լ Ցիցերոն լինի: Էդքան լավ անուններ կան աշխարհում... Գուժ, Գնել... Բայանդուր... Եպրաքսիա՝ ի վերջո... Էհ...

Դեհ, ուրեմն, ոնց որ ասվում է՝ մի քիչ էլ դիմացեք, կյանքը կարճ է... Ու մի մոռացեք, դա արվում է ձեր իսկ ազատության համար... Ազատություն՝ հանուն իր անցյալ ու ապագա ստրկության... Ոչ մի տեսակի ներկա չկա դրանց համար... Ցեխաջրի մեջ թավալ տված անցյալն ու աչքերը վերջնականապես կուրացնող չափից դուրս լուսավոր ապագան... Ու դա պիտի լինի՛... Որի համար պիտի հաղթեն... Ու տոնեն իրենց հաղթանակը... Յաղթանակ... Յետո էլի հաղթանակ՝ արդեն իրենց հետ մարտնչած եւ արդեն իրենց պարալիզացված ճանկերով խեղված զինակիցների զոհերի դիակների վրա... Ապագա դիակը պարում է ներկա դիակի վրա... Ու հենց սա է, հենց սա է դրանց ներկան... Ոռնոց, լուտանք, շարժում ու շարժում... Նրանց վերջապես

հաջողվել է ստեղծել *perpetuum mobile*-ն... Մաստուրբացիայի հավերժական շարժիչը... Ու շարժում են... Շարժվում՝ հայացքների մեջ կրելով բուլշեւիկյան ընչաքաղցության բոլոր տարրերը... իսկապես զարմանալի է. ինչո՞ւ են այդքան սիրում հավաքվել ու ոռնալ... գուցե, առաջին հերթին՝ դա նրանց լավ է մոտ ստացվում... ու երկրորդ՝ հաճելի է... իրոք, ստորի համար բնական է, որ հաճելի է լինել ստորացված ու ավելի քան հաճելի է լինել ճնշվածի դերում... Նորմալ մարդը չի ցանկանա, որ իրեն խղճան, մարդը ճնշված չի զգա, եթե մեկը գա ու ասի, որ դու ճնշված ես, որ քեզ ճնշում են... Մարդը կարհամարհի նման բաներ ասողին, կթփ վրան... Նման բաներ միմիայն բնածին ստրուկներին են դուր գալիս: Դրա համար՝ ստրուկը երազում է լինել ճնշված, ավելի ճիշտ՝ ճնշվածի դերում, ստրուկն ամենից շատ դա է ուզում... իհարկե... ես զոհն եմ, ես եմ զոհը, ինձ շահագործում են, նեղում են... Ու նրա պահանջները կարելի է լսել, կարել է եւ չլսել... նրան կարելի է խաբել, կարելի է եւ պաժել... բոլորն էլ նրա համար ընդունելի են... «Մենք պայթարեցինք, մեզ կրկին ճնշեցին»...

Ինչո՞ւ... որովհետեւ ստրուկն էությանը վախկոտ է, անասնային վախկոտ ու նա սիրում է արյունուռուշտ տեսարաններ՝ կողքից դիտողի դերում հարկավ... նրան տեսարանն է հետաքրքրում, դրա ազդեցությունը, որովհետեւ ստրուկը ի վիճակի չէ էության մեջ խորանալ... մեքենաները իրար խփեցի՞ն՝ լավ է, արժի նայել... զոհեր չկա՞ն... Էնքան էլ լավ չի, բայց տեսարանը հո կա՞... օդանավ ընկավ, շե՞նք պայթեց, կա՞յֆ, ստրուկը նայում է... Իսկ եթե առաջնորդ ունեն, վերջ, կայֆը տվե՛ց... Հավաքվենք ու լպստենք մեր Առաջնորդի միզասեռական օրգանները... Առաջնորդն էլ, իլլիչյան ժպիտով ողջունում է շարժումը ու ստիպում՝ «Ամբողջ կյանքներումդ ձեռքներդ

գոտկատեղից ներքե՛ւ եք թափ տվել, հիմա էլ դեպի վե՛ր թափ տվեք... սենց ավելի՛ կայֆ ա»: Նրանք էլ շարժում ու շարժվում են, չգիտես ինչի «ձեռքեր» անվանվող արխեոպատերիքսի ճանկերով...

Ու մի՞թե այնժամ, ձորաբերնին, երբ ոչ ոք չէր հասկանում, թե ո՞ր ուղղությամբ են թռչում գնդակները, երբ պայթյունների ձայնն արդեն լսելի չէր ոչ մեկի ականջների համար՝ հրամանատարը կպատկերացներ, որ քիչ հետո լույսն է տեսնելու... Որ գումարտակը լինելու է ուրիշ տեղ... Ո՛վ կպատկերացներ, եթե ասեին, որ... որ ահա, լսեք, դուք հիմա հեռանում եք... Չեռանում եք, որ հետո ծախու ոհմակը տրորի անունն ու ազգանունը քո... Որ մոռացվելու է այս մահը... Որ հավաքվելու են ամեն տեսակի երիզորդներ, միջատներ ու նայեն քո դիակին... Ոնց որ ճանճերը գոմաղբի վրա... Չէ՞ որ սիրում են նրանք այդ գոմաղբը... Սիրում են, իհարկե, վեհ են հնչում ու կոչվում են մեծատառով... Նրանց անցկացրած շաբաթները... Ոռնոցի տենչը, կաղկանձի մոլուցքը... Ու այդքանից հետո՝ ուզում են, որ լավ վերջանա ամենն այդ... Նրանց շաբաթների կեղտը, քրտնասառած վզերի վեր ու վարը, կոկորդներից արձակված վարակը... Ինչո՞վ են ուզում ավարտվի դա... Ի՞նչի պիտի հանկարծ վերածվի այդ դաշտը, որի վրա ոչ թե խաղաղ արածում են, այլ անընդմեջ քաթոտում ու դրա հետ համընթաց՝ մարդկային իրավունքներ պահանջում: Ինչո՞վ պիտի ավարտվի, ձե՛զ եմ հարցնում... Դեհ, իհարկե՝ սպանողով... Էդպես է եղել միշտ ու Էդպես էլ կլինի... Ու սպանոն առաջ է գալիս ոչ թե ինչ-որ մեկի հրամանով կամ որոշմամբ, այլ ինքստինքյան... Ու հիմա, երբ էդ ամեն ինչը դատապարտողներ են հայտնվում... անընդհատ... ու բարբաջում, բարբաջում... դա բարկացնում քիչ թե շատ ողջամիտ մարդկանց ու վիրավորում նրանց մտավոր ունակությունները..... Խոտակեր թափթփուկներ, ինչի՞

զարմանա... միթե՞ դրանց ուղեղի գորշահեղուկին փոխարինող թթվաջուրը կարող է անալիզի ենթարկել ու հանկարծ ըմբռնել, որ անասնական սպանդի հեղհեղուկ էներգիայի դա՛շտն է առաջ բերում այդ սարսափելի ավարտը... Որ մեղավոր ու անմեղ փնտրելու ժամանակը չի... Եթե դա դժվար եք հասկանում, թող ձեր ասածը լինի, լավ, ոստիկանի կրակոցն է առաջ բերում... Իսկ չէիք ուզի՞ գիտենալ գիտենալ, թե ԱՄՆ իշխանություններն ինչպե՞ս կվարվեին, եթե իրենց «ժողովուրդ» համարող, մեծագույն սադրանքի ենթարկված ամբոխը՝ տաս օր շարունակ փակեր Ուաշինգթոնի կամ Նյու Յորքի գլխավոր հրապարակներից մեկը: Կամ ձեռք բարձրացնել որեւէ ոստիկանի վրա (Էլ չենք խոսում շէր նետելու կամ հարյուր հոգով մի ոստիկանի ծեծելու մասին): Չգիտե՞ք, թե ԻՆՉ ԿԱՆԵՐ ՏԵՂԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Այն էլ ԱՄՆ-ում, երբ ամենափոքր փողոցը DON'T WALK-ի տակ անցնելու համար՝ ոստիկանները համարյա թե պառկեցնում են գետնին, կամ ուղարկում են դատարան... Ուրիշ կերպ չի կարող լինել... Ոչ մի բանական արարած, երբեք լավ բան չի սպասում նման ոչխարներից... Չեն հասկանում ու չեն էլ ջանում... Իսկ լրագրող կոչված իշուկների հորդան ավելի է սրում ու բարձրացնում սրանց ոռնոցի Volume-ը, որ իրենց «հեռուստատեսության աստղ» կոչեն... Դրանց հավային ուղեղները մշտապես սկանդալի է ձգտում... Նրանք հատուկ խոսքեր գիտեն... հրահրման համար... համեմված հիմար խոսքերով եւ որ ամենակարեւորն է՝ անընդմեջ գործածելով «ժողովուրդ» բառը... ու երբ նայում ես նման ոջլալրագրողների աչքերին, կայծակնապես հասկանալի է դառնում, որ նա պիտի բազարում աշխատեր... որպես գետինը վրացող, երեկոյան, առեւտրից հետո... օրվա ընթացքում էլ՝ անկյունում կուտակված, փտած լուլիկները լափեր պոռնկորդին կամ

պոռնկաղջիկը... Ի՞նչ գործ ունի նա այստեղ, հեռուստատեսությունում...
Մի՞թե պատմական անհրաժեշտություն չի դրանց կախելը... հատ
հատ... ու նաեւ նրանց, որ էսպես կոչված հաղորդումներ են սարքում...
ուրիշից գողացած... Այսինքն, հաղորդում, որի իսկականն արդեն կա...
Ռուսաստանում, Ամերիկայում... Ու նրանք նույնի մեր տեսակն են
անում... Գուցե նման էլ չլինի, բայց որ հաստատ գողացված է՝ միայն էջը
կարող է չհասկանալ... Ու նման մարմնավաճառաձագերին թա՛րս է
պետք կախել... Էնպես, ինչպես իրենք են թարս ծնվել ու թարս
ապրում... Թարս ապրողին՝ թարս կախաղան... Թե չէ՝
ժողովրդավարությունից են խոսում եղ... հավես չկա, էլ ածական չկա...
լավ, եղ անածականները... Ամերիկան սիրում է ժողովրդավարություն:
Չեք նայո՞ւմ ձեր սիրած Բուլչի կամ նման որեւէ այլ անասունի նման
տծել առարկայի աչքերին... Չեք ջոկո՞ւմ, թե ինչի է նախագահ դարձել
այդ պիղորը: Ավելու շուտ՝ ինչի համար են դարձրել... Թեեւ բնածին կեղտ
ու հիմարության նկատմամբ խորը հակում էլ է նկատվում... որ ուշադիր
նայես... Ու նման այծը խոսում է ժողովրդավարությունից, որ չկա այն
երկրներում, որոնց պետք է անհապաղ ռմբակոծել... Իրենցով անել...
Ու այդ ամենին նպաստում են նրանց հատուկ պատրաստված
գործարանները, որ թխում են ամեն տեսակի Սահակաշվիլիներ,
Յուլչենկոներ ու ամեն տեսակի նման խցանված ունիտազ մաքրելու
հատուկ ձողեր... Բայց հիմա շեղվեցինք, իսկ հավաքվածները բղավում
են, թե մեց էլի խաբեցին... Հա, բա ի՞նչ պիտի անեին, ոչխարի թուլեք...
Բորշը Էփել-տվե՞լ են ձեզ՝ տվել են... լափել ե՞ք՝ լափել եք... ու եթե չեք
մարսել՝ ինչի՞ եք ուրիշներին մեղադրում... Ձե՛ր Էփածն ուտեիք, ի՞նչ
գիտեիք, թե ուրիշի Էփածի մեջ ինչ կա... Ու ընդհանրապես՝ ինչ տան՝
պիտի ուտե՞ք... Հը՞... Ասեք, իմանանք... պետք էլ չի ասել, որովհետեւ

կուտեք, կուտեք ու օօ՛ֆ էլ չեք անի... Ժամանակը չի՞, որ լեզուների փաթաթեք-խցկեք ստամոքսների, գևաք ու պահկվեք որեւէ ճմրթած գերեզմանի հետեւում... Ու չվախենաք, քիչ հետո այն ձե՛րը կդառնա ձերը ու ի վերջո կտիրանաք ձեր պահանջներին, որ այդպես ջանում էիք կյանքի ընթացքում... Մերը, իմը... Դե տարեք ձեր «ձերը»... Տար քո «քոնը»... Թե՞ խուսափելու ես արկղում գետեղվելուգեց ու ճիճվի կեր դառնալուց... Ո՞վ կըմբռնի, որ սրանց անվերջանալի ատելության առատությունից պայթած հոգիները, լույսի ու խավարի միջնակետում կախված՝ անսահմանորեն երկար են վայելելու իրենց իսկ բերանից թափված թունահոտը... Ու նրանց մարմիններն ակամա վերացրած հոգիները՝ անվերջորեն կախված են թողնելու մեկ ուրիշի հոգին... Բայց ո՞վ է մեկ ուրիշի մասին մտածում ընդհանրապես, մանավանդ նման ձեռնաշարժալի պահերին... Երբ պիտի անպաման «հաղթեն»:

Անպայման... Ու հենց հիմա: Հիմա՛... Դա՛ են խոստանում ծալած, ունիտազը նետած պրեզերվատիվից ազատորեն դուրս պրծած եւ գերաճած առաջնորդներն իրենց... Մարմնավաճառ մոր կաթի հետ դավադրության հարյուր տոկոսանոց թուրմը ծծած կասիոսներն ու բրուտոսները, գոմեշի թրիքի միջից դուրս պրծած սպարտակները... միասեռականի հետույքից վիժված արնախում ռոբեսպիերներն ու մարատները, թերաճած եժոներ, արնախում չեգեվարաները, դեգեներատ էնգելսները, լեյբա բրոնշտեյն դավիդովիչ տրոցկիները, ռոզեմբլում մակլակովսկիները, քրտնարյունաշաղախ ֆիդելներն ու վերջնականապես ստրկացված ամբոխների առաջին առաջնորդները... Օ՛... առաջնորդներն այդ... Առաջին առաջնորդներն այդ... շինիչ... Այսինքն՝ առաջին, առաջին՝ անգամ հայրենիքին շինողները... Որ տեսչում են անընդհատ անել այն, ինչ չի հաջողվել անել

տասնամյակներ առաջ... պատանի հասակից... պատանի հասակից
ցայսօր՝ ոչ մի կնոջ հետ չկենակցած սեռամուլագարներն այդ... Հա...
Բայց ինչու մեղադրես, եթե նրանք բոլորն էլ նույն գարշահոտություն
արձակող արգանդաձեւ աղիքից են դուրս պզգացել... Քրտնաթոր
ավանակի կողմից բնաբարված ստրկուհուն սաղմնավորումից հինգ օր
հետո՝ ձվարանների պատից հետ պլոկված եւ «արգանդափող»
անվանվող, դարուփոս աղբատար խողովակից արտացնկված, կես բջջի
հաստության կիսածին վիժվածքներ... Որ մեծանում են ահավոր
արագությամբ... Օ՛, ինչպե՛ս եմ սիրում դրանց
գնդակահարությունները... Ինչպես, ինչպե՛ս... Դրըխկ, դրըխկ, դրըխկ,
դրըխկ... Ինչպիսի՛ շմեցուցիչ գեղեցկություն, ինչպիսի՛
անեկրբայության հաստատում... Մանավանդ, երբ նստացույց
անողներին են կանգնացնում պատի տակ ու դրըխկացնելով՝ էլի
նստեցնում իրենց տեղը... Ու որքա՛ն գեղեցիկ են նայվում դրանք
գեհենում... հավերժական նստացույցի մեջ... Կախարդական հրաշք,
գեղեցկության հաղթանակ, կատարելություն... Это великолепно...
C'est magnifique... amazing... exelant, super... Ահ, երազների գիրկն
ընկանք... Իսկ ընթացքում՝ նրանք շարժվում են ու ոչ դանդաղ...
Շտապում են, երեւի... գոռում են՝ հիմա... Բա, իհարկե, հիմա, հիմա...
Tempori parce! «Ժամանակը չի սպասում»... Այո, հաստատ, հիմա, հենց
հիմա, այլ ոչ օրերս... կսկսի ջարդուխուրդը... Չե՞ որ դուք էլի՛ առաջնորդ
ունեք... Այն էլ խիզախ ու փորձված առաջնորդ... Մի անգամ արդեն՝
առաջնորդել է նա ձեզ, չե՞ք հիշում... Չե՞ք հիշում, թե ՈՆՑ է
առաջնորդել... Թե՞ տառապում եք բնածին ամնեզիայով, շներ... Նա
առաջնորդել է... ու գիտի, լա՛վ գիտի՝ ինչը ոնց անի... Նրբերանգնե՛ր նա
գիտի, դիվանագիտություն... Երբ է պետք բղավել, երբ երգել, երբ

պարել, երբ կռանալ, երբ փաթաթվել, երբ ծալվել: Նա
ապստամբության, ազատության ու հավասարության ու
եղբայրասպանության ոգին է... Գաղափարամահվան մարտիկը... Ու
խրոխտ... Յուլիտերը, Չեւսը ու Մարսը մի անձի մեջ... Նա ամեն ինչ
կարողանում է անել... Նա պարում է, ո՞նց չեք ջոկում, որ ձե՛զ համար է
պարում, որ դուք ուրախանա՛ք, չդմրե՛ք, շարժվե՛ք... Չե՞ որ նա ինքը
շարժվել է ամբողջ կյանքը... կռվել է... մասնակցել է աշխարհի բոլոր
պատերազմներին, արշավաքններին, ապսամբություններին,
դավադրություններին ու դավաճանություններին... բայց, միեւնոյն է՝
ամենից շատ սիրել է պատերազմները... մանավանդ՝ քաղաքացիական
ու գյուղացիական... կապ չունի... բոլո՛ր, բոլո՛ր պատերազմներին է
մասնակցել նա... Սկսած եգիպտախեթական պատերազմներից, անցած
բյուզանդո-արաբական, անգլո-բուրական՝ վերջացրած հրեա-
պաղեստինյան եւ հայա-հայկական պատերազմներով... Հա...
Հայկական... Իր սիրած պատերազմների ընթացքում, կարծեմ, հայերին
առաջին անգամ բախվել է վեցերորդ դարում, Բուզանդա-Գոթական
պատերազմի վերջերին, ուր, բնականաբար լինելով Գոթերի ոգին,
զորավար Տոտիլայի աջ թեւն ու girlfriend-ը միաժամանակ՝ ծանր
հարվածներ է հասցրել եւ պարտության մատնել Վելիզարոսի զորքերին:
Բայց երբ վերջինիս փոխարինել է հայ զորավար Ներսեսը եւ Թեհինայի
ճակատամարտում փչացրել է Տոտիլային, նա, մեր հերոսը,
ստրատեգիայի բացառիկ հմտությամբ իսկույն անցնելով Ներսեսի
կողմը՝ դարձել է վերջինիս անդադրում հարճը... Անգլիայի գրավման
ժամանակ անձամբ կանգնած է եղել Վիլիելմ Նորմանդացու կողքը...
Հարյուրամյա պատերազմը նրա տարերքն է եղել... Стихия... Էլ չեմ
խոսում ավստրո-ֆրանկո-սարդինական թեժ պատերազմի մասին, ուր

անձամբ սպանել է Ֆելդմարշալ Յիուլային... Աչքը վնասվել է Չինաստանի վրա Մանջուրական արշավանքների երկրորդ փուլում, 1644 թվականի ապրիլի 26-ի երեկոյան, երբ Լի Ցզի-չենի զինվորները գրավեցին Պեկինն ու դինաստիայի վերջին կայսր Մին Չժու Յուին ստիպեցին ինքնասպանություն գործել... Իսկ արդեն ապրիլի 27-ին, մանջուրական կայսր Ու Սան-Յույը (սույն ինքը՝ Ու Սան-խույ), անուշադրության մատնելով հանված աչքի գործոնն ու խիզախ մարտիկի տառապանքները՝ նրա վրա է փորձարկել Կամասուտրայի 43-ից մինչ 151 դիրքերը... Բայց ոչինչ պատահական չի լինում, այդ դիրքերի իմացությունը նրան անհրաժեշտ եղավ Բաստիլի գրավումից մեկ օր առաջ, 1789 թվականի հուլիսի 13-ի կեսօրին, երբ նա, Կամիլ Դեմուլենի ու Մարի-ժոզեֆ Լաֆայետի հետ՝ դիրքեր էր շարում սանկյուլոտների համար: Ինչպիսի ռազմավարական մեծ գիտակցություն, մարտունակություն... Բոլոր պատերազմների, արշավանքների, դավադրությունների, խառնակցությունների եւ բաժօրկա-ների ընթացքում՝ վիրավորվել է ավելի քան երկուհարյուրյոթանասունինը անգամ, խոշտագվել հարյուրվաթսունութ անգամ... բռնաբարվել է ութհարյուրտասերեք, սպանվել տասմեկ, զոհվել վեց... մահապատժի ենթարկվել ութսունվերկու, թրատվել տասնութ, գլխատվել երեսուն, գնդակահարվել քսաներկու...անգամ... ու թլպատվել է... չորսհարյուրհիսուներկուսուկես անգամ... (Նա հիմա էլ է թլպատվում, օրը ութ անգամ՝ ճաշից առաջ): Բայց, միեւնույն է, երբեք, ոչ մի պարագայում չի կորցրել կամքն ու հավատը, տոկունությունն ու ճկունությունը, բարիությունն ու գոթերից ժառանգված գոթությունը... Մարտնչել է մեծ զորավարն ու զինվորը... Ու միշտ հաղթել է... բացառությամբ Ղոմեական քաղաքացիական պատերազմի վերջերին

Ակցիայի հրվանդանի մոտ կայացած տխրահռչակ ծովամարտի... Ուր մարտնչում էր խելքը քաձերին տված Մարկուս Անտոնիոսի հետ թել-թելի... Միայն եղտեղ է, որ մի թեթել, համարյա աննկատ, շատ թույլ ցռել է տակը՝ առաջին կայսր Յուլիոս Կեսար Օկտավիանոս Օգոստոսի անձնական նավի մեծությունը տեսնելու եւ Մարկուս Վիպսանիոս Ագրիպայի առնանդամի չափսերն ու կշիռը մարմնի բոլոր առանցքներում զգալու ընթացքում... Բայց հետո՝ ոչինչ... ինչպես տեսանք՝ դա նրան նոր ուժ ու եռանդ է հաղորդել... նրա համար այլեւս սարսափելի չէն եղել ոչ մի տեսակի նավեր ու մանավանդ անդամներ... Նա սկսել է ըմբռնումով մոտենալ դրանց... անգամ սիրել... Ու զգալ... Մարմնի ներսում... Տարուբերվել... Յետ ու առաջ գնալ... Շարժվել... Բայց քանզի եւ վասնզի անհնարին է եղել դրսեւորվել որպես արական սեռի ներկայացուցիչ՝ չի կարողացել կոչվել շարժման տղա... կոսմոպոլիտ սեռամուլագար ու սատանիստ... Եւրոպաամերիկյան «դեմոկրատիայի» ամենօրյա մարդակերությունից հետո մարսված, արտաթորանք դարձած մարդկանց անցուղին լիզող... մշտնջենական պոռնիկ, դիակապիղծ լեշակուլ... Ապագային ապականող... ներկայի ներկայությունը աններկայնացնող... անցյալն անցաթերթիկ դարձնող... վաղուց սատկած մեռելների հանկարծահաս հարալեզ... ինչի համար էլ լավ գիտի ամեն տեսակ լեզուները... Իսկարիովտացիների գաղջացեղի ամեավերջին շառավիղուհու ամուսին... Եւ ինչո՞ւ միայն ամուսին: Ամուսին, tam...x ու ինչեւու անձեռոցիկ... три в одном... Յետն էլ ցույցերի է բերում... Եխիդնային... բա ո՞նց, կոսմոպոլիտզիզմ, ազգաձուլում, գլոբալիզացիա եւ մայրապղծություն... Եթե գազանանոց տանում եմ՝ ցույցերի էլ պիտի տանեմ... Ու դեռ հարց է, թե ո՞վ է ում տանում, անձեռոցիկը՞ Եխիդնային, թե՞ Եխիդնան անձեռոցիկիկին...

Բայց անձեռոցիկը ո՞նց տանի... անձեռոցիկը չի կարող տանել...
Ուրեմն՝ Եխիդնան է տանում... Omnia mea mecum porto՝ «Ամեն ինչս
հետս եմ տանում»... ու... դուք... դուք իմ ժողովուրդ, իմ ժողովուրդ՝ մի
անհանգստացեք, ես ձեր հետ եմ, դուք ձեր պարտքն եք կատարում, ես՝
իմ... Ես ձեզ պարտք եմ... որովհետեւ չհասցրի անդամս մինչեւ վերջ
կոկորդներդ հասցնել... Իսկ դուք պարտական եք, որովհետեւ այնքան էլ
լայն չբացեցիք հետանցքներդ, որ կոկորդներիդ հասներ... Յիմա ես ձեզ
կտանեմ ազատության... Որ հետո՝ ազատ բացեք... **Ինչպես կասեր**
Կուցիուս Ռուփուսը՝ Suis quaeque temporibus. Ամեն ինչ իր
ժամանակին... Բայց հիմա հետանցք բացել պետք չէ, ոչ... Յիմա
կոկորդներդ բացեք, կոկորդներդ... Բացեք... Բացեք, հիմա, հենց
հիմա... հիմա՛... հիմա՛... հիմա՛... Ու սրբացրեք ինձ հենց հիմա... Չեք
ուզում սրբացնել... Բայց առջեւում Սուրբ Բարթոլոմեոսի գիշերն է...
Ձեզ սուրբ պետք չի՞, որ ջարդամահ լինելու պահին տանը քնած,
երազում աղոթի ձեր հոգիների փրկության համար... Կամ կո՛ֆե խմի ու
Եխիդնայի հետ Թալմուդից հատվածներ երգի... Ու... Ու ապրի՛, ապրի՛,
ապրի՛... Չէ՞ որ Primum vivere... «Նախ եւ առաջ ապրել»... Յա... Դե ձեզ
տեսնեմ առաջ, ես ձեզ հետ եմ, մենք հաղթելու ենք... Եւ ես, ես,
սրբագույնս թափանցահոգի մոլախոտս՝ Ձեր Առաջնորդը կդառնամ...
Կռայսլերի մեջ քնող գորավարը... սեփական ստրուկից շինվող
կայսրը... միզահոտ կանցլերը... գյոռմամիշ արքան... Ձեր արքան, ձեր
արքան, ձեր Էդիպ արքան... որ մայր հայրենիքիս հետ ամեն օր,
անընդհատ, անվերջանալիորեան շինիչ քաղաքականությունն է վարել...
վարել է, ցանել ու տրորել... ձեզ... Իսկ մե՞զ... Որ «աղջատել եք»
ձեզնից... Յը՞... Յարց եմ տալիս... Էդ աղջատելուց առաջ չգիտեի՞ք, որ
մենք երբեք կպած չենք եղել ձեզ... քաթին...

Իսկ դուք, սկսեք... Դեհ, սկսեք... ախ, արդեն սկսել եք... Վերջ չունե՞ք
դուք, ինչի, ինչի չի կտրվում ձեռը ձեր, հը՞, ինչի՞

...Չի կտրվում ձեռը ձեր
քֆրտում եք հեր ու մեր
Լափեք-լափեք... միայն հենց
Էլ ի՞նչ Միսակ Մեծարենց...

Ամեն մեկդ մի հերոս
ձեզ էլ ի՞նչ Դուրյան Պետրոս
Սպանել- քշել եք ափից
Սկսած Գրիգոր Չոհրապից...

Դեհ, հերիք է էլ հեւաք,
սպանեցիք Պարույր Սեւակ
Փող եք աշխատում վրան,
Ու գոռում «Մեռնենք իրան»...

Արդեն 30 տարի....
....դավաճաններ նոր ու հին....
բալայաններով գորի՛

կընկնէք ճանկը Տեր Չորի...

...Ու ոռնացէք ամբոխով

պարզ է, ձրի չէ, փողով

բայց հիշէք, որ հենց էնպես՝

չի ընդունի հողը ձեզ...

Էդ վերջին քառատողը շատ հավանեցի ու ինքնաբերաբար սկսեցի
կրկնել մտքումս՝

...Ու ոռնացէք ամբոխով

պարզ է, ձրի չէ, փողով

բայց հիշէք, որ հենց էնպես՝

չի ընդունի հողը ձեզ...

Ոչ մեկիդ չի ընդունի... Ես ձեզ չեմ ուզել տեսնել ու երեւի էլ չտեսնեմ...

Որովհետեւ տարածք կա, եղել է, կա ու կլինի մեր մեջ: Բայց ՄԵՆՔ էինք,
ի վերջո, իրար հետ: Էդ մենք ու «դուք»-ն ո՞վ հնարեց... Ո՞ր

մայրապիղծը... Որ մեզ դարձրեց՝ «մենք, դուք»... Բայց մենք գոնե մենք՝
մենք ենք, դուք անգամ դուք չեք... Ձեր արյունն են պղտորել...

Յիմնահատակ... Ու հիմա՝ ձեր կայենային արյո՞ւնն էք ուզում խառնել
մերին... Յը՞... Յիմա՞... Յենց հիմա՞... Ձե՛ն հանեք, ոչխարներ... Ինչի՞ եք

պապանձվել... Թե՞ արդեն փողն առել, ձեր ոռնալիքը ոռնացել ու ձեր
արյունն էլ թափել-պրծել էք, այ վարձու ինքնասպաններ... Աշխարհում
լիքը վարձու մարդասպաններ կան, էդ գիտեհիք, բայց որ մեզ մոտ մի

կույտ վարձու ինքնասպաններ են հայտնվել՝ վերջերս իմացանք... Ու
ի՞նչ եք ուզում դուք հիմա... Ազատություն ու արդարություն...
Կստանա՞ք դուք դա... Հավասարությունն էլ ձեզ նվեր, bonus... Որ
հավասարը-հավասարին՝ հերթով մորթազերծ անեք միմյանց... ձեր
մարդու իրավունքներով հանդերձ, որ խրախուսում է իրար մորթազերծ
անելը... Ու... Ու... մի անգամ մոտներով անցա, մեկին հարցրի՝ ինչի՞,
ինչի՞ համար եք լոշ եղել փողոցում, ի՞նչ եք ուզում, հը՞... Ու ինձ
ասացին... ինձ ասեցին «Դավաճան»... Ինձ, որ բոլոր ընկերներիս
կորցրել էի... այն ժամանակ... քարափի մոտ... Ու ոչ միայն... Ու ես հիմա
դավաճա՞ն եմ՝ բոզի թուլե՞ք... Հը՞: Ո՞վ է դավաճան, ո՞վ: Նա, ով
արյունով ստեղծված, քամու հարվածից անգամ փլվելու ենթակա
Պետությունը քանդո՞ւմ է, թե գոնե մի կերպ պահում, ասե՛ք, վիժված
թարախախառն մսակտորներ... Ինձ ասում եք դավաճա՞ն, ի՞նձ... Ու
տակը ցռած կառավարությունն էլ թո՞ւյլ է տալիս դա... Թույլ է տալիս ու
անգամ խրախուսո՞ւմ... Չէ, չէ, չէ... Եստեղ, ես պարագայում, Ավգուստո
Պինոչետ պետք չի, Եստեղ մի հատ Լավրենտի Բերիայի պես տղա ա
պետք, որ սաղիդ, լսո՞ւմ եք, սաղիդ, ընդդիմական թե կառավարական,
սաղիդ, սաղիդ մերը, ձեր մարդու ու գոմեշի իրավունքներով հանդերձ
դներ ու քուներ... հերթով... Ի՞նչ եք ուզում, գանդոններ... Հը՞... Ո՞ր ես,
Իոսիֆ Վիսարիոնովիչ, մի ժամով կենդանացի ու ծ...ցրա սրանց սաղի
մամաներին... Հը՞... Գյոթի ճտեր... Ինչի՞ բարկացրիք ինձ... Է՛լ ինչ է
հասնում ձեզ... ասե՛ք... Ի՞ՆՉ Է ՀԱՍՆՈՒՄ ՁԵՁ... Պատասխանի եմ
սպասում ու էլի կրկնում՝ Ի՞ՆՉ Է ՀԱՍՆՈՒՄ ՁԵՁ... Հը՞... Ի՞նչ... Դեհ,
իհարկե՛ դարավոր ու չքնադագույն բանադրանքից բացի... Որ ինքներդ
եք գրել ձեզ համար... Ինքներդ... Միայն ու միայն ինքներդ... «Անիծալ
լինենք մեր տանն ու մեր անկողնում, քնի մեջ թե ճանապարհին,

ոռնալիս ու լռության մեջ: Թող անիծյալ լինեն մեր բոլոր
զգայարանները. տեսողությունը, լսողությունը, համի զգացումը ու մեր
ամբողջ մարմինը՝ «գլխագագաթից» մինչ ոտնաթաթերի ծայրը»:
Դառնանք մեր առաջնորդի զուգարանի թուղթը... այն առաջնորդի, որը
դեռ ապրում է լկտիաբար...

...Ու այնժամ, 91-ի հոկտեմբերին, ողջ մնալուց առաջ, մարտի դաշտում,
գնդակների տարափի տակ՝ ես քեզ սիրում էի, մարդ արարած... Գիտեի,
որ գլխներիս դու կաս... քո ընկերները կան... Դուք կաք... Ու մեզ
անտեր չեք թողնի... Դուք խորհուրդ ունեք... Չայրենիքն ու ապագա
Պետությունն եք խորհրդանշում... Ես գրում էի նրան, ով ինձ սպասում
էր, սիրոն էի գրում իմ... Բայց եւ մտածում էի քո մասին... որ դու
կկատարես քո պարտքը, ես իմ... քո մասին էի մտածում, մարդ
արարած... մտածում էի, որ այո, մեր վիճակը ծանր է, մեզ ամեն
վայրկյան կարող է դիպչել թուրքի գնդակը, կամ ականը պայթեր մեր
տակ... Բայց որքան դժվար է քո վիճակը... Ու գրում էի իմ սիրուն՝
հավատալով ինձ ու քեզ... Որ կհաղթենք... թուրքին... այլ ոչ հային, ինչ
դու ես հիմա քարոզում, բոզի վաստակ... Ես մտածում էի, որ
կվերադառնամ իմ սիրո մոտ... հաղթանակած... ու
բանաստեղծություններ էի գրում, գիշերները, երբ կրակոցները դառնում
էին հատուկենտ: Ես իմ սիրուն էի գրում, իմ Չայրենիքին ու քեզ... Գրում
էի, գրում, գրում, ու խոսում...

խոսում, գոռում, որ հավատաս՝ ողջ եմ ես...

որ աչքերդ կյանք են սփռում ու նաեւ

կռվից սիրոս չի քարացել, հող չեմ ես

քանի դու կաս՝ ոչինչ չկա, կա արեւ...

Ես կռվում եմ, ես դողում եմ քո կողքին

Վախի դող չէ, լուսածին է դողը մեր...

Խավարի մեջ համբուրում եմ քո շողքին

որ ամրանա, սերս, ուժս, հողը մեր...

Քեզ գրում եմ, բայց ոչ անմիտ ու անհանգ,

սա կռիվ չէ, բաժանում է տարանցիկ...

շուտով կգամ, կելնեմ դեմդ ու անհագ

կառնեմ գիրկս, կշշնջամ՝ «Չաղթեցինք»:

Ու հիմա, իմ խայտառակ ողջ մնալուց տասնյոթ տարի հետո, երբ դու

չկաս, երբ կա ամբոխը, ես... ես հիշում եմ քեզ... երբեմն... կներես...

հիշում եմ ու նույն ռիթմն ինձ ձայնել է տալիս:

Քեզ գրում եմ հիմա անմիտ, անհրկեզ...

ո՞ւմ կռիվն էր բաժանումն այդ, դո՛ւ ասա

Ու թե գայիր դու առջեւս որ գրկես

կիրեի, կգոռայի՝ «Վե՛րջն է սա»...

